ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003Թ.
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1210: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468
18001

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 7 ՄԱՐՏԻ 2018Թ.
№ 6 (464)

Սյունյաց երկիր

Աշխարհ իմ, ականջիդ
Մի բան եմ ասելու,
Քեզանից փախչելիս
Քո գիրկն եմ վազելու...

Համո Սահյան

www.syuniacyerkir.am

Գնդապետ Արարատ Մելքումյանը՝ ՀՀ ՊՆ 1-ին բանակային կորպուսի հրամանատար

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով ՀՀ պաշտպանության նախարարության 1-ին բանակային կորպուսի հրամանատար է նշանակվել գնդապետ Արարատ Մելքումյանը:

Արարատ Մելքումյանը 2016թ. ապրիլյան պատերազմից հետո պարգեւատրվել էր «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով:

ՀՀ նախագահի մեկ այլ հրամանագրով 1-ին բանակային կորպուսի հրամանատարի պարտականություններից ազատվել է գեներալ-մայոր Տիգրան Փարվանյանը՝ նշանակվելով Զորքերի (ուժերի) միացյալ խմբավորման հրամանատար:

«Սյունյաց երկիրը» շնորհավորում է գնդապետ Արարատ Մելքումյանին՝ ՀՀ պաշտպանության նախարարության 1-ին բանակային կորպուսի հրամանատար նշանակվելու կապակցությամբ, մաղթում նրան բարի ծառայություն եւ հաջողություններ փառապանծ կորպուսի մարտական պատրաստության հետագա բարձրացման գործընթացում:

Արմեն Սարգսյանը՝ Հայաստանի Հանրապետության 4-րդ նախագահ

Մարտի 2-ին ՀՀ Ազգային ժողովում հրապարակվել են հանրապետության նախագահի ընտրության քվեարկության արդյունքները:

Քվեարկությանը մասնակցել է 101 պատգամավոր: 90 կողմ, 10 դեմ ձայների հարաբերակցությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ է ընտրվել Արմեն Սարգսյանը:

ՀՀ ԱԺ նախագահ Արա Բաբլոյանը շնորհավորել է Արմեն Սարգսյանին՝ Հանրապետության նախագահի բարձր պաշտոնում ընտրվելու կապակցությամբ:

Խորհրդարանի ղեկավարը տեղեկացրել է, որ ՀՀ սահմանադրության 127-րդ եւ «ՀՀ ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի 49-րդ հոդվածների համաձայն՝ հանրապետության նախագահը պաշտոնն ստանձնում է Ազգային ժողովի հատուկ նիստում, որը հերթական ընտրության դեպքում գումարվում է հանրապետության նախորդ նախագահի լիազորությունների ավարտման օրը: Նշվել է, որ ԱԺ հատուկ նիստը կգումարվի ապրիլի 9-ին: Հատուկ նիստի անցկացման կարգը սահմանվում է ԱԺ նախագահի առաջարկությամբ՝ խորհրդի որոշմամբ:

Հանրապետության նորընտիր նախագահ Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել ՀՀ ԱԺ պատգամավորներին՝ քվեարկության համար՝ հավաստիացնելով, որ իր գործունեության ընթացքում կծառայի ողջ հայ ժողովրդին:

parliament.am

Խելահեղ օրերի մասնակիցն ու վկան

Ղարաբաղյան շարժումը ժամանակի մեջ ժամանակի նոր հաշվարկ սկսեց: Եվ հրապարակ դուրս եկան ազգի նվիրյալները: Գորիսը, որ Ղարաբաղի դրկիցն է, ի նշան ղարաբաղցիների հետ համերաշխության, նույնպես հրապարակ դուրս եկավ: Սակայն պարզվեց, որ միացում գոչելով, կոչերով, միտինգներով կորսվածը հետ չես բերի: Որովհետեւ ազգերին ժամանակի անարդարության դեմ պայքարի ելածներին զենքով պատասխանեց: Նա հարձակվում -հրետակոծում էր գյուղերը, առեւանգում -սպանում էր անմեղ հովիվներն, անասնապահներին: Հարկավոր էր գործել ակն ընդ ական սկզբունքով: Եվ Գորիսի բոլոր թաղամասերում ջոկատներ կազմվեցին: Նրանք գործում էին անջատ-անջատ: Հարկավոր էր ցախավելի տրամաբանությամբ գործել՝ հաջողության հասնելու համար, այսինքն, միավորել բոլոր ջոկատները: Այդ նպատակով Գորիսում ստեղծվեց 15 հոգուց բաղկացած ինքնապաշտպանության խորհուրդ, որի մեջ ընդգրկվեցին կռվող տղաներ, որոշ հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ:

- Ժողովուրդն այդ խորհուրդն անվանեց դիրեկտորների խորհուրդ,- ասում է Հայկ Մանուչարյանը,- բայց դա արտաքուստ էր այդպես, այդ դիրեկտորների ձեռքին տնտեսական հզոր պոտենցիալ կար, իսկ դրա անհրաժեշտությունը խիստ էր զգացվում այդ ժամանակ: Այդ բազայի շնորհիվ մենք նույնիսկ թնդանոթ ենք պատրաստել, էլ չեմ խոսում զենք գնելու մասին: Եվ ժողովուրդը հասկացավ, որ դիրեկտորներին խորհրդի կազմում ընդգրկելը ճիշտ քայլ էր, նրանք որոշակի աշխատանք կատարեցին շրջանի ինքնապաշտպանության կազմակերպման գործում:

Խորհրդի անդամներից էր նաեւ զրուցակիցս՝ Հայկ Մանուչարյանը, ով ավարտել էր նաեւ Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանը, տարածաշրջանում հայտնի մանկավարժ-դասախոս-մտավորական էր: Նա շարժման հենց առաջին օրերից զգաց, որ իր տեղն այն հզոր տղերքի շարքում է, որ ելել են վերջ դնելու պատմական անարդարությանը:

- Համլետ Մկրտչյանը, ով ինքնապաշտպանության խորհրդի նախագահն էր, կարողացավ համախմբել տղաներին եւ բոլորի ուժերը նպատակամղել շրջանի ինքնապաշտպանության կազմակերպմանը,- ասում է Հայկ Մանուչարյանը:

Եվ Հայկ Մանուչարյանը հետ տանելով տարիների 30-ամյա վարագույրը, հիշում է անցած-գնացած, պատմություն դարձած օրերը: Ու խոսում է միայն մենք-ի անունից, երբեք չի ասում՝ ես այս արեցի, այն արեցի: Դա հատուկ չէ նրան: Հայկ Մանուչարյանի կողմից շարժմանը միանալը ժողովրդի համար վստահության եւս մի քվե էր շարժման նկատմամբ:

- Երբ կոռնիձորցի հովիվներին ազերիներն առեւանգեցին, մենք հովիվների նկարները փակցրեցինք քաղաքի տների պատերին: Ու գիտե՞ք ինչքան մարդ միացավ մեզ՝ ասելով՝ մենք ձեզ հետ ենք:

Ժողովրդի ինքնաբուխ արձագանքը մեր ուսերին նոր բեռ դրեց. մենք պետք է «հորով-մորով» անեինք

էջ 6

Գորիսի պետական համալսարանի գործունեության հաշվետվությունը

Փետրվարի 16-ին Գորիսի պետական համալսարանում տեղի ունեցավ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի հերթական նիստը, որին ներկա էր նաեւ ՀՀ ԿԳ նախարար Լեւոն Մկրտչյանը: Օրակարգում ԳՊՀ-ի տարեկան՝ 2016-2017 ուստարվա աշխատանքային գործունեության հաշվետությունն էր եւ 2018 թվականի եկամուտների ու ծախսերի նախահաշվի հաստատումը:

Նիստին ներկա էին խորհրդի 24 անդամից 18-ը:

Նիստը վարում էր խորհրդի նախագահ, Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, ով, ողջունելով խորհրդի անդամներին, ներկայացրեց օրակարգը եւ առաջարկեց ընթացիկ հարցերի մեջ ընդգրկել նաեւ Գորիսի պետական համալսարանի կազմակերպաիրավական կարգավիճակի փոփոխության վերաքննարկումը: Հիշեցնենք, որ մեկ տարի առաջ՝ 24.02.2017թ. գումարված նիստում նույն խորհուրդը քննարկել եւ միաձայն ընդունել էր բուհը ՊՈԱԿ-ից հիմնադրամի վերակազմակերպելու՝ ռեկտոր Ա.Ղուկասյանի առաջարկը, ինչպես նաեւ հավանության էր արժանացրել «Գորիսի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության նախագիծը, ինչի արդյուքնում միջնորդություն էր ներկայացվել ՀՀ ԿԳ նախախարություն՝ սահմանված կարգով հարցին ընթացք տալու համար: Բուհի կազմակերպաիրավական կագավիճակի փոփոխության հարցը ներկայում իրավական օրինաչափ գործընթացում է:

Խորհուրդը միաձայն հաստատեց օրակարգային հարցերը:

ԳՊՀ ռեկտոր, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտուշ Ղուկասյանը հանդես եկավ Գորիսի պետական համալսարանի՝ 2016-2017 թվականի ուսումնագիտական ու ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների եւ 2018թ. եկամուտների ու ծախսերի նախահաշվի հաստատման հիմնական ցուցանիշների մասին հաշվետու զեկույցով: Ռեկտորն ամփոփեց բուհի նախընթաց ուսումնագիտական ու ֆինանսատնտեսական տարին՝ միաժամանակ մատնանշելով 2018թ. խնդիրները, ծրագրերն ու անելիքները:

Հաշվետու տարում համալսարանում ձեռնարկվել եւ իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ ու ծրագրեր, որոնք կոչված են ապահովելու համալսարանի գործունեության արդյունավետությունը, խթանելու առաջընթացն ու մրցունակությունը գիտակրթական ասպարեզում: Համալսարանի կառավարման գործընթացներն ինչպես 2015-2016, այնպես էլ 2016-2017 ուսումնական տարում ուղղված են եղել ուսումնական, գիտական եւ հասարակությանը մատուցվող այլ ծառայությունների շարունակական բարելավմանը:

Հաշվետու տարում համալսարանի հիմնական խնդիրն էր իրականացնել ինստիտուցիոնալ ինքնագնահատում եւ վերլուծություն՝ ապահովելով բուհի հաշվետվողականությունը ներքին եւ մասնավորապես արտաքին շահակիցների առջեւ: Նշենք, որ 2017թ. համալսարանում մեկնարկել է պետական ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթացը՝ համաձայան ՀՀ կառավարության 2011թ. N 978-Ն որոշմամբ ընդունված «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների եւ դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի»:

ԳՊՀ-ի ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթացը կազմակերպվել է պայմանագրային ամրագրում ունեցող ժամանակացույցով, համաձայն որի՝ ԳՊՀ-ի կողմից ներկայացվել է ինքնավերլուծության զեկույցը եւ կազմակերպվել է փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցը բուհ: **«Իրականացված փորձագիտական գնահատման զեկույցը՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու եւ եվրոպական բարձրագույն կրթության տարածք ինտեգրվելու բուհի հավակնությունների տեսանկյունից, կարեւոր փաստաթուղթ է, որն ուղենիշ է հաստատության առաջիկա զարգացման եւ գործունեության իրականացման համար»,** - նշեց ռեկտորը: Հավատարմագրման գործընթացի ավարտը նախատեսվում է մարտին, թեեւ, ռեկտորի հավաստմամբ, որակի բարելավման գործընթացը շարունակական բնույթ է կրելու, քանի որ անելիքները շատ են եւ հատկապես մի քանի ոլորտներում արմատական բարեփոխումների անհրաժեշտություն կա:

Ռեկտորը խոսեց նաեւ բուհի ռազմավարական ծրագրի, զարգացման գերակայությունների մասին՝ նշելով, որ թեեւ ԳՊՀ-ի ծավալած գործունեությունն ընդհանուր առմամբ համահունչ է եղել 2011-2016թթ. ռազմավարական զարգացման հայեցակարգում ձեւակերպված առաքելությանն ու նպատակներին, այնուամենայնիվ փորձագիտական զեկույցում մատնաշված թերությունների մեծ մասը գալիս է բուհի գործունեության նախկին հնգամյակի ռազմավարական ծրագրում առաջ քաշված գերհավակնոտ նպատակների իրականացման մեխանիզմների բացակայությունից, որակի ներքին ապահովման համակարգի ձեւավորման ուղղությամբ չհամակարգված քայլերից, ռեսուրսների անարդյունավետությունից, մի շարք անհրատեսական, ոչ չափելի, համալսարանի շահակիցների համար ոչ ընկալելի հավակնություններից: **«ԳՊՀ 2011-2016թթ. ռազմավարական ծրագիրը հավակնոտ է եւ փոխկապակցված չէ իր ֆինանսական ռեսուրսների առկա վիճակի հետ»,** - նշվել է փորձագիտական զեկույցում: ԳՊՀ ղեկավարությունը նշված ժամանակահատվածում (2011-2016թթ.) չի ունեցել լավ մշակված պլանավորման համակարգ՝ ռազմավարական նպատակներին հասնելու համար, այնինչ ամբողջ գործընթացը պետք է ապահովեր ԳՊՀ-ի առաքելության ու ռազմավարության, տարածաշրջանի ակնկալիքների ու ներուժի լիակատար համապատասխանություն, ինչի դեպքում ԳՊՀ-ի ծավալած գործունեությունն առավել համահունչ կլիներ իր առջեւ դրած նպատակներին:

«Բուհի 2018-2022թթ. ռազմավարական ծրագրում արդեն կիստակեցվեն բուհի ռազմավարական ուղղություններն ու գերակայությունները, կսահմանվի ծրագրի իրականացման հստակ ժամանակացույց», - հավելեց Ա.Ղուկասյանը:

Միջանկյալ նշենք, որ Գորիսի պետական համալսարանը նախկին ղեկավարության օրոք մեկ անգամ արդեն ունեցել է հավատարմագրման ձախողում, եւ 2017 թվականից վերսկսված գործընթացում հնարավոր եղավ արձանագրել նկատելի դրական արդյունքներ՝ ԳՊՀ-ի համապատասխան օղակների՝ վերջին երկու տարիների կանոնակարգված աշխատանքի, բուհում իրականացված զգալի բարեփոխումների շնորհիվ:

Ռեկտորն իր հաշվետու զեկույցում նշեց նաեւ, որ ԳՊՀ-ն իրավական կարգավիճակի փոփոխությունների իրականացման գործընթացում է, ինչը զգալիորեն դժվարացնում է բուհի ռազմավարական կառավարման պարբերական գործընթացները: **«Նոր կարգավիճակը ենթադրում է ընդլայնել բուհի գործունեության ոլորտները՝ դրական ազդեցություն ունենալով ԳՊՀ-ի ֆինանսական կարողությունների դրության եւ ձեռնարկատիրական գործունեության բազմազանեցման վրա»:** Փոխակերպման այս ժամանակավոր վիճակը նոր ռազմավարության մշակման ու կիրարկման հիմնական դժվարությունն է: **«Իր ներկայիս իրավական կարգավիճակով ԳՊՀ-ն, իհարկե, շարունակում է հետեւել իր կանոնադրության մեջ սահմանված առաքելությանը, բայց եւ ելնելով բուհի զարգացման գերակա ուղղությունների ու ռազմավարական նպատակների իրականացման կարեւորություններից՝ լրջորեն նախածեռնել ենք քննարկումներ բուհի ներքին բոլոր օղակներում՝ առաջիկա տարիների բուհի գերակայությունների սահմանման վերաբերյալ»:**

Ի տարբերություն հին ռազմավարության՝ բուհի նոր ռազմավարությունը պետք է շատ ավելի իրատեսական լինի եւ խթանի բուհի առաջընթացը: Նպատակները մշակվում են ներքին շահակիցների տարբեր խմբերի հետ համատեղ՝ ամրապնդելու նոր ռազմավարության նկատմամբ ողջ ակադեմիական համայնքի սեփականության զգացումը»:

2016 եւ 2017 թվականները ԳՊՀ-ի համար ընդհանուր առմամբ զգալի փոփոխությունների տարիներ էին, քանզի հիմնավոր քայլեր են ձեռնարկվել համալսարանում բազմաբնույթ բարեփոխումներ իրականացնելու համար: Ռեկտորն անդրադարձավ համալսարանի ուսումնամեթոդական գործունեությանը, դրա կազմակերպման ու կատարելագործման խնդիրներին, ուսանողական համակազմի աճման ու նվազման ցուցանիշներին, ուսումնական բեռնվածությանն ու հաստիքների տեղաբաշխմանը, գործող մասնագիտությունների վերալիցենզավորման ու նոր մասնագիտությունների լիցենզավորման խնդիրներին, գիտահետազոտական գործունեության ցուցանիշներին, կարիերայի զարգացմանը, հասարակայնության հետ կապերին, միջազգային ծրագրերին, ֆինանսատնտեսական գործունեությանը եւ այլ հարցերի:

Նա կարեւոր ձեռքբերում համարեց հաշվետու տարում համալսարանում ներդրված նոր մասնագիտությունները, որոնք բխել են աշխատաշուկայի պահանջներից: Բակալավրի կրթական ծրագրով 2017թ. ընդունելություն է կատարվել «Անգլերեն լեզու եւ գրականություն», «Կերպարվեստ», մագիստրոսի կրթական ծրագրով՝ «Հատուկ մանկավարժություն» եւ «Զբոսաշրջության կառավարում» մասնագիտությունների գծով: Վերջինս ներդրվել է միջազգային HERITAG ծրագրի շրջանակում: Բուհում նպատակասլաց աշխատանքներ են իրականացվել ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավման ու մեթոդների նորացման, կրթության որակի ներքին ապահովման համակարգի կատարելագործման, դասավանդման որակի բարձրացման, ուսուցման տեխնոլոգիական հենքի նորացման ու զարգացման եւ այլ ուղղություններով: Ինչպես նախորդ, այս ուսումնական տարում նույնպես բուհի առաջնային խնդիրներից է եղել ներքին իրավական դաշտի շարունակական բարելավումը, մի շարք կանոնակարգերի ու ընթացակարգերի մշակումը եւ կիրառումը կրթական պրոցեսում:

Հաշվետու տարում ԳՊՀ-ում մեկնարկել են երկու միջազգային ծրագրեր՝ էրազմուս+ LNSS (Գրադարանային ցանցի աջակցության ծառայություններ. գրադարանների արդիականացում Հայաստանում, Մոլդովայում եւ Բելառուսում՝ գրադարանների անձնակազմի զարգացման եւ գրադարանային ծառայությունների բարեփոխումների միջոցով) եւ էրազմուս+ HERITAG (Բարձրագույն կրթության միջառարկայական բարեփոխումներ զբոսաշրջության կառավարման եւ երկրատեղեկատվության ոլորտների ուսումնակրթական ծրագիր) ծրագրերը: HERITAG ծրագրի արդյունքն էր նաեւ ԳՊՀ-ում երկրատեղեկատվական տեխնոլոգիաների լաբորատորիայի ստեղծումը՝ հագեցված ծրագրի միջոցներով ձեռքբերված անհրաժեշտ սարքավորումներով: 2018 թվականին համալսարանում կմեկնարկեն չորս նոր միջազգային ծրագրեր, որոնք մեծապես կնպաստեն բուհի միջազգայնացմանն ու ֆինանսական կայունացմանը:

Ռեկտորը խոսեց նաեւ այն հետեւողական աշխատանքների մասին, որոնք իրականացվել են տնտեսական եւ ենթակառուցվածքների զարգացման ոլորտում: ԳՊՀ-ի տարբեր մասնաշենքերում կատարվել են բարեկարգման ու մասնակի վերանորոգման աշխատանքներ, ձեռնարկվել են միջոցառումներ նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ, ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ եւ այլն: Այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվելու են նաեւ 2018 թվականին:

Համալսարանական կյանքի բոլոր բնագավառներում իրականացվող աշխատանքներում ակտիվորեն ընդգրկվել են ուսանողական կառույցները: ԳՊՀ-ում ձեւավորվել է ուսանողական գիտական ընկերություն, հաստատվել է ՈՒԳԸ կանոնադրությունը: **«ՈՒԳԸ-ի ստեղծումը խոսում է այն մասին, որ բուհը նկատել է առկա խնդիրը եւ, օգտագործելով նաեւ այդ կառույցի հնարավորությունները, պլանավորում է հասնել իրավիճակի բարելավման, որը կհանգեցնի ուսանողների հետազոտական գործունեության ակտիվացմանը եւ մի շարք մասնագիտական կոմպետենցիաների ձեւավորմանը»,** - նշեց ռեկտորը: Հաշվետու տարում բուհում առաջին անգամ կազմակերպվել է հանրապետական մակարդակով ուսանողական գիտաժողով՝ նվիրված ԳՊՀ-ի 50-ամյակին, որին ակտիվորեն մասնակցել են ինչպես ԳՊՀ-ի, այնպես էլ ՀՀ այլ բուհերի ուսանողները:

2017-ը հագեցած էր բուհի 50-ամյակին նվիրված բազմաբնույթ միջոցառումներով, որոնք ամփոփվեցին հոկտեմբերի 19-20-ը՝ «Սյունիքը կրթության եւ մշակույթի օջախ» խորագրով հանրապետական բացառիկ գիտաժողովի կազմակերպմամբ: Գիտաժողովին մասնակցում էին մոտ ութ տասնյակ գիտնականներ, մասնագետներ ու մշակույթի գործիչներ ՀՀ, ԼՂՀ եւ արտերկրի գիտական ու գիտակրթական հեղինակավոր կառույցներից:

«Ռազմավարական նպատակների արդյունավետ իրականացման համար ԳՊՀ-ն

էջ 7

«Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը՝ Արցախի Հանրապետությունում

2018թ. փետրվարի 23-ին «Հայոց արծիվներ» հայրենասիրական կազմակերպության պատվիրակությունը, կազմակերպության նախագահ Խաչիկ Ասրյանի գլխավորությամբ, այցելել է Արցախի ազատագրված տարածքներից մեկում տեղակայված զորամաս եւ հանդիպել զինվորների հետ՝ քաջալերելով նրանց ծառայությունը հանուն Արցախի Հանրապետության անվտանգության ու անձեռնմխելիության:

Դրանով «Հայոց արծիվներն» իրենց 1500-րդ միջոցառումն էին անցկացնում Արցախի սրբազան հողում՝ հայոց զինվորների մոտ:

ՀՀ պաշտպանության նախարարության բանակային 1-ին կորպուսի նորաշշանակ հրամանատար, գնդապետ Արարատ Մելքումյանի մասնակցությամբ անցկացվող միջոցառմանը հրավիրված էր նաեւ «Սյունյաց երկիր» թերթի ստեղծագործական խումբը:

N զորամասում տեղի ունեցած հանդիսությանը ելույթ է ունեցել նաեւ թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը:

Սեփ. լրատվություն

Ուրվագծվում է դպրոցի շինհրապարակը

Նախորդ տարվա օգոստոսի 15-ից մեկնարկել է Կապանի թիվ 7 միջնակարգ դպրոցի շինարարությունը: Կրթօջախի նախկին մասնաշենքն ապամոնտաժելուց հետո տեւական ժամանակ ոչինչ չէր արվում, ամայի տարածքը սպասում էր իր կառուցապատողին: Այժմ դպրոցի աշակերտների մի մասը դասերն անցկացնում է N6 դպրոցում, մի մասը՝ նախկին լուսատեխնիկական գործարանի վարչական շենքում, ինչը հուշում էր, որ օր առաջ պիտի սկսվեր շինարարությունը: Ինչեւէ, թունելի վերջում լույսը երեւում է: Արդեն ուրվագծվում է կրթօջախի շինհրապարակը:

Կառույցի պատվիրատուն Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամն է, կապալառուն՝ «Վարարակն» փակ բաժնետիրական ընկերությունը (տնօրեն՝ Արայիկ Բուդաղյան): Դպրոցն ունենալու է երկու եռահարկ ուսումնական մասնաշենք, մարզադահլիճ եւ նիստերի դահլիճ, բաց խաղահրապարակ: Շինարարության նախագծային արժեքը 1 մլրդ 400 մլն դրամ է: «Վարարակն» ՓԲ ընկերությունը 100 մլն դրամ ավելի ցածր գին է առաջարկել՝ շահելով մրցույթը եւ շինարարությունը սկսելու իրավունք ստացել:

Գործում գրանցված եւ գործող «Վարարակն» ՓԲ ընկերությունը հայտնի է իր շինարարական գործերով տարածաշրջանում եւ Արցախի Հանրապետությունում, որտեղ կյանքի է կոչել բնակելի եւ ռազմական նշանակության օբյեկտներ: Կառույցի աշխղեկ Սամվել Նարինյանը տեղեկացնում է, որ անցած ժամանակամիջոցում ավարտվել են հողային աշխատանքները, ցցային հիմքեր են արել, որի վրա լինելու են հիմնային հեծանները, հենապատ են կառուցել: **«Մինչեւ վերջին մեխը մենք պիտի խփենք»,**- ասում է աշխղեկը եւ հավելում, թե վերջում բարեկարգման ինչ աշխատանքներ պիտի անեն: Ս.Նարինյանը փորձառու շինարարի համարում ունի Գորիսում: 1974 թվականին բուհն ավարտելուց հետո հիդրոշինարարի մասնագիտությամբ աշխատանքային կենսագրությունը սկսեց «Տաթեւհէկից», այնուհետեւ Գորիս N2 շինվարչություն, շինմորոգման գրասենյակ եւ այլ շինարարական կազմակերպություններ, մինչեւ, ինչպես ինքն է ասում՝ փուլ եկավ երկիրը: Դրանցի հետո մասնավոր շինարարական գործերով է զբաղվել: Նա տեղեկացնում է, որ այս տարում նախատեսված է իրականացնել 650 մլն դրամի շինմոնտաժային աշխատանքներ: Այնպես պիտի անեն, որ հաջորդ ձմռանը ծածկի տակ աշխատեն:

Մեր այցելության օրը կառույցում 25-ից ավելի շինարար էր աշխատում: Աշխատանքային ծավալներն աճելուն զուգընթաց՝ աստիճանաբար այդ թիվն ավելանալու է: Ընդ որում՝ կան պայմանագրով աշխատող մասնագետներ: Վալերիկ Մուշկամբարյանը մասնագիտությամբ հյուսն-ամրանագործ է, միացել է գործիսեցի շինարարներին: Շինարարությունում աշխատելու մեծ փորձ ունի: 1982-ին բանակից զորացրվելուց հետո Կապանի երկաթբետոնյա կառուցվածքների գործարանում է աշխատել: Հետո տարբեր շինարարական կազմակերպություններում եւ կոոպերատիվներում: Ասում է, որ կառույցի հիմքերը 3,5 մետր խորություն ունեն եւ հավելում, որ ամուր շենք է լինելու:

Երիտասարդ շինարար է Զոհրաբ Մնացականյանը. Կապանի սանէպիդկայանի կառույցում է աշխատել, Մեղրու բժշկական կենտրոնի շինարարությունում: Շաղախ է լցնում հիմնային հեծանների մեջ, դժվարությամբ է աշխատանքից կտրվում: **«Չեմ կարող երեք ժամ կանգնել՝ հարցերիդ պատասխանել»,** - ասում է, թեպետ երկու րոպե չկար, ինչ զրուցում էինք: Փութով շարունակում իր գործը:

Բարենպաստ եղանակը թույլ է տալիս գործն առանց ընդհատումների առաջ տանել, այլ բան է, եթե ծմեռային սառնամանիքներ ու առատ տեղումներ լինեին ձյան տեսքով: Ինչպես «տեղեկացնում» է շինարարության ցանկապատին փակցված վահանակը, շինարարության ավարտ է սահմանված 2019-ի դեկտեմբեր ամիսը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Մենք պեսնելու ենք նրա ճողոպրումը Սյունիքից

«Սյունյաց երկրի» դեմ վերջին օրերին ձեռնարկված աներեւակայելի ստորությունների համապատկերի վրա թերթի սկզբունքներն ու դիրքորոշումը նորովի ճշգրտելու եւ հանրայնացնելու կարիք է առաջացել:

Նախ՝ թերթն ու syuniacyerkir.am կայքը ոչ մի օր չեն շեղվել իրենց առաքելությունից: Աշխատում ենք լրիվ ծանրաբեռնվածությամբ ու անդադար, ինչպես նախորդ ժամանակներում: Այդպես կլինի նաեւ այսուհետ:

Մեր սկզբունքներն ու որդեգրած ճանապարհն անշեղ են՝ մենք ենք մեր երկրի ե՛ւ մշակը, ե՛ւ տերը: Ու շարունակելու ենք լինել երկրամասի ընթացքի ճշմարիտ վավերագրողը:

Այս պարագայում նույնիսկ ընդլայնվում է մեր լսարանը. տպագիր օրինակի մի փոքր ուշացումը կամ կայքի նյութերի թարմացման հապաղումն իսկույն տեղիք են տալիս ընթերցողների անհանգստության ու բազում հեռախոսազանգերի:

Ամեն ժամ զգում ենք հազարավոր սյունեցիների աջակցությունն ու զորակցությունը: Հավատացած եղեք՝ մեզ հետ է արժանապատիվ Սյունիքը: Մեզ հետ է Սյունիքի մարզպետարանի աշխատակիցների մեծագույն մասը. բազմաթիվ մարզպետարանցիներ նույնիսկ պատրաստ են իրենց մեկ ամսվա աշխատավարձը նվիրել թերթին: Մենք ենք մարդկանց խնդրում եւ կոչ անում՝ զուսպ մնալ թերթի հետ համագործակցելիս, ձեռնպահ մնալ թերթի օգտին հրապարակային գործողություններից, քանի որ Սյունիք ներխուժած ասպատակը շատ դաժան է եւ պատրաստ է վնասել յուրաքանչյուրին:

Հայտարարում ենք վերստին՝ մարզպետն իր խմբակով, համայնքապետներով, ենթակա դպրոցների տնօրեններով ու Քաջարանի կոմբինատի ֆինանսական հսկայական ռեսուրսներով չի կարող կանգնեցնել «Սյունյաց երկրի» ազգանպաստ, երկրաշեն ու պետականաճնվեր ընթացքը: Շատ ամոթ կլիներ թերթի, նրա խմբագրի համար, եթե նրանք միասին, համատեղ ուժերով կարողանային կանգնեցնել մեզ:

Գաղտնիք կարող ենք բացել նույնիսկ. թերթը լրիվ ռիթմով գործելու է ոչ միայն 2018-ին (ինչպես հայտարարել ենք ավելի վաղ), այլեւ 2019-ին. դրա համար բոլոր հիմքերը կան: Ավելին՝ «Սյունյաց երկիրը» առնվազն լինելու է այնքան ժամանակ, քանի դեռ Սյունիքի դարպասներից գրողի ծոցը չենք ճամփել Վահե Հակոբյանին:

Մի կարեւոր ճշտում եւս. ստեղծագործական աշխատանքում շարունակելու ենք կատարել միայն ու միայն պատվերներ, ինչպես նախորդ տարիներին, իսկ պատվիրատուն եղել ու կմնա բացառապես Սյունյաց արժանապատիվ ժողովուրդը:

Տեսնելով, որ ձախողվել է թերթի գործունեությունը 2018-ի հունվարից դադարեցնելու երդումի իրագործման հարցում, տեսնելով, որ խոսքի ուժով իր դիմակն ամեն օր նորովի է բացվում ու բացահայտվում, մարզպետը նոր ու ստոր քայլեր ձեռնարկեց խոսքի ազատության սյունիքյան կղզյակը խորտակելու համար:

Հիմնավոր հույս ունենք, որ մարզպետի հրահանգով ու մարզի ոստիկանապետի ջանքով թերթի դեմ հորինված քրեական գործերի քննությունը կիրականացվի հանրապետության այլ վայրում եւ ոչ Սյունիքի մարզում, քանի դեռ մարզի իրավապահ համակարգի միանձնյա ու փաստացի ղեկավարը Վահե Հակոբյանն է:

Վստահ ենք՝ շուլալված քրեական գործերը կհալվեն մայիսյան ձյունի պես, եւ բոլոր վարձկան մատնիչները պատասխանատվության կենթարկվեն սուտ մատնության համար: Հայտնի իմաստություն կա՝ ստի պոչը կարճ կլինի:

Հավատացնում ենք՝ քրեական գործեր կոչվածներից որեւէ մեկի հիմքում գոնե մեկ փաստ կամ ապացույց չկա:

Դրանք հորինվել են հանրության ուշադրությունը մարզպետի չարագործություններից, կամայականություններից ու հակապետական արարքներից շեղելու, հանրությանը մոլորության մեջ գցելու ստույգ նպատակով:

Դրանք հորինվել են Վահե Հակոբյանի ֆինանսական ներդրումներով եւ պրիմիտիվ պատկերացումներով: Դրանով մարզպետը փորձել է հավասարության նշան դնել իր աշխատասենյակի, իր գիշերակացի վայր պրոֆիլակտորիայի ու խմբագրատան միջեւ, որը նրան չի հաջողվել ու չի հաջողվի երբեք, քանզի «Սյունյաց երկրի» դավանած եւ գնահատանքի ու դրվատանքի արժանացած արժեքներից առաջինը, թերթի լինելիության կարեւորագույն

Սյունեցիներն այլեւս չեն պատրաստվում հանդուրժել իրենց արժանապատվությունը վիրավորող եւ պետականությանը կործանիչ հարված հասցնող մարզպետին

(Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանին)

Մեծարգո նախագահ

Սյունյաց աշխարհը հայոց բազմադարյա պատմության մեջ կոչվել է ամուր աշխարհ եւ հանդիսացել Հայոց արեւելյաց կողմերի անառիկ ամրոց: Պատերազմների դեպքում 21 հազարանոց անպարտելի այրուձիով իր անքննելի ներդրումն է ունեցել մեր երկրի պաշտպանության գործում, իսկ Սյունյաց Սիսական տոհմի նահապետերը երկրորդ պատվավոր բարձի իրավունք են ունեցել հայոց մեջ: Սյունիքը մշտապես հայոց պետականության պաշտպանն է եղել, իսկ երբ թագավորություն է հռչակվել, պատմիչ Ստեփան Օրբելյանի շուրթերով է արդարացի բացատրություն տրվել եւ հիմնավորվել իրավունքը գահի:

Այս անպարտելի լեռներում են փառքի եւ հերոսացման գործեր կատարել Սիսական, Օրբելյան, Պռոշյան տոհմերը, քաջարի մելիքները, Դավիթ Բեկն ու Մխիթար սպարապետը, Նժդեհն ու Արցախյան ազատամարտի անպարտելի քաջորդիները: Ասվածի վերջին ապացույցը 2016թ. ապրիլյան ռազմական գործողություններում սյունեցիների հայրենանվեր պոռթկումն էր, երբ երկրապահի 2000 մարտիկների շարքերում միայն սյունեցիները 600 էին, իսկ 102 զոհերից 13-ը մեր լեռնաշխարհի որդիներ էին:

Սյունեցին գիտի հայոց անկախ պետության գինը, գիտի կռվել ու պաշտպանել իր հայրենիքը, գիտի հպարտ ու ստեղծագործ կյանքով ապրել եւ ունի արժանապատվության բարձր զգացում:

Մինչդեռ այն, ինչ կատարվում է մարզում, վիրավորում է սյունեցիների արժանապատվությունը եւ կործանիչ հարված հասցնում նրանց հավատին առ անկախ պետականություն, կառավարման համակարգ եւ երկրի առաջնորդ:

Խնդիրներ, անլուծելի հարցեր եւ դժգոհություններ եղել են, կան ու կլինեն, սակայն երբ մարզպետ է նշանակվում մարդ, ով մարդկային հարաբերությունների, տնտեսական, հասարակական ու ղեկավարման խնդիրներին նայում է ԿՀԲ-ական ու ֆինանսական օլիգարխի ապազգային սկզբունքներով, աճում եւ ամբարվում են ոչ միայն դժգոհություն, այլեւ ատելություն, արհամարանք ու հիասթափություն:

Ամենուրեք Ձեր եւ Ձեր շրջապատի տնտեսական գործակալ ներկայացող Վահե Հակոբյանին Սյունիքում չեն հետաքրքրում այն տխուր փաստերը, որ դաշտերը հերկված չեն,

որ գործազրկությունն ու արտագաղթը սարսափելի ծավալների են հասել, որ տնտեսական լուրջ ծրագրեր չկան, որ կառավարման համակարգը թողնված է բախտի քմահաճույքին:

Պարոն նախագահ

Արդյո՞ք ճիշտ է, որ մարզի ԱԱԾ-ն, դատախազությունը, ոստիկանությունը ղեկավարվում են նրա կողմից եւ կատարում նրա սուբյեկտիվ ցանկությունները:

Արդյո՞ք ճիշտ է, երբ հայտարարում է, որ յուրաքանչյուրին կնստացնի ու կկորցնի:

Արդյո՞ք Սյունիք են վերադարձել 30-ականների ռեպրեսիվ ժամանակները:

Որպեսզի մերկապարանոց չլինի վերեւում արտահայտած մտքերը, փաստենք, որ 1,5 տարվա ընթացքում մոտ 13 քրեական գործ է հարուցվել նրա անձնական հրահրմամբ, որպեսզի պատժվեն նրա անձնական հակառակորդները:

Երկարամյա մանկավարժ, տնօրեն Ռուբեն Ձաքարյանը հաղթում է Դարբաս գյուղի դպրոցի տնօրենի մրցույթում ու չի նշանակվում այդ պաշտոնում, որովհետեւ նա մարզպետի մարդը չէ, եւ անմիջապես քրեական հետապնդում է սկսվում, որը տապալվում է, բայց ծառայում մարզպետի ճղճիմ ամբիցիային:

Սիսիանի տարածաշրջանի Դարբասի ենթաշրջանի յոթ գյուղի բնակիչները հիասթափված են հայրենի իշխանություններից եւ երկրի իրավիճակից՝ բացառապես մարզպետի պահվածքի պատճառով:

Կապանում անձնական նկատառումներով պաշտոնանկ արվեց հանրապետությունում ճանաչված բժիշկ Սմբատ Օրբելյանը, ում գլխավորությամբ Արցախյան պատերազմի տարիներին Կապանի հիվանդանոցը հազարավոր մարդկանց կյանք փրկեց:

Սյունիքի լրատվության մակարդակը, բացախոսության եւ բազմակարծության վիճակը տասնհինգ տարի շարունակ պայմանավորված է «Սյունյաց երկիր» թերթի ու նրա խմբագրի գործունեությամբ: Բայց քանի որ ճշմարտություն լուսաբանող թերթը դուր չեկավ մարզպետին, չգովերգեց նրա կործանարար անգործությունը, դարձավ աներեւակայելի ստորությունների թիրախ: Անհայտ անձանց կողմից ՌԴ-ում կազմակերպվեց բռնարարք նրա նկատմանմ, որն այդպես էլ չի հետաքրքրում մեր իրավապահներին, հիմա էլ փորձ է արվում շինծու եւ արհեստածին մեղադրանքներով քրեական գործեր հարուցել խմբագրի հանդեպ՝ նպատակ ունենալով վերացնել ճշմարիտ, անկողմնակալ եւ ազատ խոսքի այդ հարթակը:

Հիշեցնենք՝ Սամվել Ալեքսանյանը Հայաստանի Հանրապետության վաստակավոր լրագրողի կոչման է արժանացել Ձեր կողմից ու այն սյունեցիներից է, ով դեռեւս 1992-93թթ. դաժան ռմբակոծությունների ժամանակ Գորիսում խմբագրել ու առանց դադարի հրատարակել է «Ձանգեզուր» թերթը, առաջնագծից լուսաբանել Արցախյան ազատամարտը: Առ այսօր այդ թերթը մնում է իբրեւ սկզբնաղբյուր Արցախյան ազատամարտի այդ հատվածի իրադարձությունները հետազոտողների համար:

Սյունիք գյուղի դպրոցի տնօրեն, դպրոցական գործի բացառիկ գիտակ, Կապանում մեծ հարգանք վայելող Լիլիթ Առաքելյանն աշխատանքից ազատվեց միայն այն պատճառով, որ մարզպետի կամայականություններին ընդառաջ չի գնացել եւ ընթերցել է մարզպետի կողմից արգելված թերթը:

Եվ այդ ամենը՝ Ձեր լուռ եւ անտարբեր հայացքի ներքո…

Սյունեցիներն առանձնակի հարգանքով ու պատկառանքով են վերաբերվել իրենց աշխարհի մարզպետներին, որոնք ապրել են երկրամասի հոգսերով ու երազանքներով, պայքարով ու հաղթանակներով: Սակայն այս մեկը խորշում է անգամ մարդկանց ձեռքով բարեւելուց, աշխատանքի է գալիս այն ժամանակ, երբ հոգնում է իսպառնական վայելքներից ու երեւանյան ճոխություններից: 1,5 տարվա ընթացքում ոչ միայն չի եղել լեռնաշխարհի գյուղերում ու քաղաքներում, այլեւ չգիտի, թե ինչ վիճակում են մարդիկ ապրում ու ինչ է կատարվում մարզում ընդհանրապես:

Պարոն նախագահ

Իսկապես, ինչո՞ւ սյունեցիները պետք է հանդուրժեն այս ամենը:

Ո՞րն է պատճառը, որ նա վիրավորում ու հետապնդում է սյունեցիներին ու մնում անպատիժ: Եվ ոչ ոք նրա ձեռքը չի բռնում:

Ո՞րն է պատճառը, որ ապրիլյան պատերազմից մի քանի ամիս հետո այցելում է Սիսիան ու ոչ միայն չի այցելում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշահամալիր, այլեւ խնջույքի ժամանակ վիրավորում է նրանց հիշատակը:

Ինչո՞ւ եք հանդուրժում այս ամենը, մի՞թե մեզ համար ավելի բարձր բան կա, քան պետական շահը, հայոց շահը, Սյունիքի շահը:

Պարոն նախագահ

Այդ ամենով հանդերձ՝ Սյունիքում գլխավոր հարցն այլեւս Վահե Հակոբյանը չէ: Նրա մասին նույնիսկ ավելորդ է խոսել:

Հիմա խաղատախտակին Ձեր արժանապատվության հարցն է, քանզի մեր կողմերում գրեթե բոլորը միակարծիք են, որ մարզպետի կամայականությունները չէին լինի, եթե չլինեին Ձեր թողտվությունը, Ձեր անհասկանալի եւ անբացատրելի լռությունը, որը, ներող եղեք, ուղղակի քաջալերանք է Վահե Հակոբյանին:

Պարոն նախագահ

Այսուհետ նույնպես կարող եք քաջալերել Վահե Հակոբյանին, թիկունք լինել նրան՝ հակասյունիքյան եւ հակապետական բոլոր գործերում: Բայց ուզում ենք հիշեցնել, որ Դուք նաեւ մեր նախագահն եք, բոլոր սյունեցիների նախագահը:

Դուք կարող եք այսուհետ եւս նրան տալ պետական ու ազգային շահերից վեր արտոնություններ: Բայց գոնե ասացեք, թե ինչո՞ւ եք պետական ու ազգային շահը, Հայաստանի Հանրապետության անսակարկելի շահը զոհաբերում «անհայտ կենսագրությամբ» ու «ակնհայտ վնասարարությամբ» զբաղվող Վահե Հակոբյանի ոտքերի տակ:

Հարգանքներով՝ Վարազ Սյունեցի, Մարատ Բագրատյան, Արսեն Գալստյան,

Արսեն Օհանյան, ևս Սյունիքում տիրող իրավիճակով մտահոգ 46 սյունեցի

noyan-tapan.am
22-02-2018

Գրավականը խմբագրի, խմբագրակազմի յուրաքանչյուր անդամի բարոյական վեհ ու ընդօրինակման արժանի նկարագիրն է:

Ավելին, տասնյակ սյունեցիներ հրաժարվել են Վահեից գումար վերցնել ու նույնիսկ նոր պաշտոն ստանալ եւ դրա դիմաց՝ ընդդեմ Սամվել Ալեքսանյանի կեղծ հաղորդումներ տալ ոստիկանությանը. կգա ժամանակը, կլինեն անվտանգության երաշխիքներ եւ կհրապարակենք բոլորի անունները, իսկ առայժմ՝ մեր անկեղծ երախտագիտությունը նրանց՝ քաղաքացիական ու մարդկային ազնիվ պահվածքի համար:

***

Տեղի ունեցող իրադարձություններին զուգահեռ մարզպետի սազանդարները նրան փառաբանելու նոր ագիտարշավ են սկսել՝ Հայաստանի ամենահզոր մարզպետն է, Սյունիքի նախորդ մարզպետների համեմատությամբ ամենազորավորն է, Հայաստանի ապագա ոստիկանապետն է…

Կենացային ոճի այդ արշավը, սակայն, խղճահարություն է առաջացնում առ մարզպետ:

Դատեցեք ինքներդ՝ մարդուն տվել են անսահմանափակ իշխանություն, քաջնազարականության հեքիաթային պատկերացումները գերազանցող լծակներ… Ի դեպ, Հայաստանում ոչ մի պաշտոնյա չունի այդչափ իրավունքներ: Այո, մարդուն տվել են Սյունիքի մարզպետի լիազորություններ, Հայաստանի ամենախոշոր հանքարդյունաբերական ձեռնարկության ֆինանսական հոսքերը վերահսկելու մանդատ, Սյունիքի մարզի իրավապահ մարմիններն ուղղակիորեն ղեկավարելու, ուղղաթիռով աշխատանքի հաճախելու, տարվա մեջ ութ անգամ արձակուրդ մեկնելու, օրերով ու շաբաթներով աշխատանքից փախչելու, արտերկրում ագարակներ գնելու, նախագահի ու վարչապետի՝ հրապարակավ արտահայտած դիրքորոշումներին հակառակ գործելու, ՀՀ սահմանադրությունը եւ գործող օրենքները շրջանցելու, ուժեղացված թիկնազորով պաշտպանվելու, սյունեցիների հանդեպ ատելություն սերմանելու, մարզի մտավորականներին, փոքր ու միջին ձեռնարկատերերին ճնշելու եւ ասպարեզից հեռացնելու, ազատ խոսքի դեմ պատերազմելու իրավունք: Մարդուն պաշտպանելու համար (նախարարությունների, գերատեսչությունների, առաջատար լրատվամիջոցների, գրանտակեր հկների, իրավապաշտպան կազմակերպությունների ջանքերով) պողպատակուռ պարիսպ են կառուցել Հայաստանով մեկ:

Եվ այդքանով հանդերձ ու այդքանից հետո մարդը չի կայանում մարզպետի պաշտոնում, մի ամբողջ երկրամասում ընկալվում է իբրեւ թյուրիմացություն, իբրեւ օտարական ու ասպատակ:

Այդքան լիազորություններ ունենալով՝ վեց ամիս շարունակ պայքարում է, որ իր հովանավորյալ մեկին լեռնային հեռավոր գյուղում՝ Դարբասում, դպրոցի տնօրեն նշանակի ու չի կարողանում:

Փորձում է աշխատանքից ազատել Սյունիք գյուղի դպրոցի տնօրենին եւ չի կարողանում անել օրենքով ու ցայտնոտի մեջ է հայտնվում:

Հայցադիմում է ներկայացնում դատարան՝ իբր իր արժանապատվությունը պաշտպանելու համար, բայց վախենում է ներկայանալ դատարան:

Ապօրինաբար աշխատանքից ազատում է Կապանի հիվանդանոցի տնօրենին, բայց սարսափահար փախչում է դատարանից եւ չի կարողանում պատասխան տալ իր արարքի համար:

Խոսում է Սյունիքի անունից, բայց առանց թիկնազորի աշխատասենյակից մի մետր անգամ չի հեռանում:

Այնքան է սարսափած, որ իր աշխատասենյակ մտնողներից պարտադիր կարգով պահանջում է անձնական իրերը թողնել ընդունարանում…

Դա՞ է հզոր մարզպետը, դա՞ է ուժեղ անհատականությունը: Վերը նշված լիազորությունների մեկ տոկոսը (մարզպետի կարգավիճակով) տվեք որեւէ հաշմանդամ աղջկա եւ կտեսնեք, թե որքան հզոր մարզպետ, որքան համերաշխ եւ ուժեղ Սյունիք ունենք:

Եթե դա է հզորը, ապա ո՞վ է վախկոտն ու ստրուկը, ո՞վ է դավադիրն ու խառնակիչը, ո՞վ է մկան ծակը մտածը:

Սերժ Սարգսյանը վերջերս Եվրոպական ամենահեղինակավոր հարթակից հայտարարեց՝ «Այո՛, Թուրքիան հզոր է, բայց Թուրքիայից հզորներն էլ կան»:

Այո՛, Վահեին անսահմանափակ լիազորություններ են նվիրել, բայց բոլոր այդ լիազորությունները ոչինչ են սյունեցու արժանապատվության, սյունեցու պատվախնդրության դիմաց:

***

Եվ, այդ բոլորով հանդերձ, պարզագույն մի քանի հարց է հետաքրքրում հանրությանը. ինչո՞ւ են, օրինակ, Վահե Հակոբյանին տվել վերպետական, վերսահմանադրական, վերազգային լիազորություններ եւ ինչո՞ւ են արտոնել, որ այդ լիազորություններն օգտագործվի բացառապես անձնական նպատակներով կամ ընդդեմ Հայաստանի Հանրապետության:

Խոստովանենք՝ այդ հարցի պատասխանն առայժմ ոչ ոք չի տալիս Հայաստանի Հանրապետությունում:

Բայց մի ուրիշ հարց էլ կա՝ Վահե Հակոբյանի մասին գրվել ու գրվում է բոլոր առումներով ու հանգամանալից, փաստարկված: Նա լիովին դիմակազերծված է: Ինչո՞ւ այդ ամենից հետո ոչինչ չի փոխվում մարզում, ինչո՞ւ գրված հոդվածներից ոչ մեկը չի քննարկվում պետական մակարդակով:

Այդ հարցախմբին, թույլ տվեք ասել, այնքան էլ համաձայն չենք:

Լրագրային այդքան հրապարակումներով, նախ՝ բավականին լուրջ զսպաշապիկ ենք հագցրել նրան: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ մասշտաբների կհասնեին նրա կամայականությունները, քանի-քանի մտավորականների, տնօրենների նույնպես կհալածեին, քանի-քանի քրեական նոր գործեր եւս կհարուցվեին անմեղ մարդկանց դեմ, եթե թերթը չլիներ:

Մեր հրապարկումներով հույսի կանթեղն ենք անշեջ պահել Սյունիքում եւ հավատը մեր պետական կարգի ու հատկապես դատական-իրավական համակարգի հանդեպ: Տեսեք, թե ինչպես են բոլորը, ում իրավունքը ոտնահարում է անօրեն մարզպետը, գնում դատարան. տարիներ շարունակ Սյունիքում նման բան չի եղել, մարդիկ հազվադեպ են շրջանցել մարզպետի հեղինակությունը եւ դիմել դատարան: Մինչդեռ Վահե Հակոբյանն այսօր դատարանում բազմաթիվ գործերով պատասխանող է: Ընդ որում՝ վստահաբար կարող ենք հայտարարել, որ պարտվելու է բոլոր վեճերում:

Մի՞թե արդյունք չէ իրողությունը, որ պաշտոնավարման 16-րդ ամսում, ի վերջո, մարզպետը սկսել է շաբաթական երեք-չորս օր աշխատանքի հաճախել: Ընդ որում՝ երբեմն ոչ ուղղաթիռով:

Մի՞թե արդյունք չէ իրողությունը, որ գրեթե բոլոր իրավիճակներում (ժողովներ, հանդիպումներ, սեփական աշխատասենյակում մարդկանց հետ զրույցներ) իրեն ոչ միայն տարօրինակ է պահում, այլ անհավասարակշիռ՝ թողնելով ուրիշ բանի տպավորություն:

Մի՞թե արդյունք չէ, որ մեկուկես տարի մարզպետի աթոռը զբաղեցնող անձնավորությանը սյունիքյան հանրությունը շարունակում է օտարական, վնասարար, անգործունակ եւ դասալիք համարել, շարունակում է ամեն օր սպասել նրա պաշտոնանկությանը:

Հիշենք նախորդ բոլոր մարզպետներին, հիշենք Հայաստանի բոլոր մարզպետներին. ոչ մեկը նրանցից այսչափ չի նվաստացվել ու պարսավանքի ենթարկվել հրապարակավ, որքան այս մեկը: Շարունակությունը պետք է փնտրել բարոյականության, արժանապատվության դաշտում: Ամեն օր թքում են երեսին՝ ասում է՝ անձրեւ է գալիս ու ճակատը նորից դեմ անում:

Չենք էլ հավատում, որ գրված հոդվածները Երեւանում չեն նկատում, չենք էլ հավատում, որ պետական ամբողջ վերնախավը (մեկ-երկու բացառությամբ) զզված չէ նրանից:

Միգուցե եւ մեզ միամիտ ու դյուրահավատ համարեք, բայց մենք հավատում ենք հայրենի պետությանը, այս օրերին տեղի ունեցող համակարգային փոփոխություններին, երկրի ղեկավարին՝ ակնկալելով, որ մի ամբողջ երկրամաս չի կարող մնալ այս վիճակում՝ իբրեւ արոտավայր, իբրեւ ալպյան մարգագետին, իբրեւ զվարճանքի վայր մի հոգու համար:

Ի վերջո ոչինչ չի կարող հավերժական լինել: Ավելի զորավորներ են եղել ե՛ւ Սյունիքում, ե՛ւ Հայաստանում: Ու նրանք ժամերի ընթացքում ի չիք են դարձել ասպարեզից:

Անպայման այդպես է լինելու նաեւ մեր հակահերոսի ճակատագիրը: Եվ այդ ժամը մոտեցել է. արդեն իսկ մարզպետափոխության ուրվականն է շրջում Սյունիքում:

Մենք անպայման տեսնելու ենք նրա մազապուրծ փախուստը Սյունիքից: Մենք նրա խայտառակ վախճանի վկան ենք լինելու եւ արդեն վկան ենք:

Ինչ վերաբերում է մայրաքաղաքային լրատվամիջոցների, հասարակական եւ իրավապաշտպան կոչված կազմակերպությունների զգալի մասի կուրությանը, ապա դրա պատճառները կիմանանք միայն ու միայն այն ժամանակ, երբ կբացահայտվի, թե «Քրոնիմետ մետալ թրեյդինգ Սի Այ էս» անվամբ ընկերությունն ինչ նպատակով եւ ինչ ուղղությամբ է ծախսում ամսական մոտ 100 մլն դրամ աշխատավարձի ֆոնդը՝ ստացված Քաջարանի կոմբինատից:

***

Մեր աչքի առջեւ են նաեւ մարզպետի ստրուկների սյունիքյան շարքը, հայտնի տարփուհիների, հարճերի խրախճանքը եւ մատնիչների գնդի շքերթը:

Ոչ մեկից նեղանալու իրավունք չենք վերապահում մեզ. նրանք էլ սրբապղծությամբ են իրենց հացը վաստակում:

Մեկ ուրիշ առումով, մինչդեռ, նրանց պահվածքը հետաքրքիր է:

Վահեի նվիրած պաշտոնները, բնականաբար, կորցնելու են շատ շուտով: Նույնիսկ ստիպված են լինելու հաղորդումներ գրել եւ ոստիկանությանը տեղեկություններ տալ ընդդեմ Վահե Հակոբյանի. սովորաբար այդպիսի ճակատագիր են ունենում պալատական ներքինիները, նաժիշտները, ստրուկներն ու ուրացողները:

Խնդիրը, սակայն, դա չէ, այլ…

Ի՞նչ երեսով են մարդամեջ դուրս գալու նրանք: Չէ՞ որ նրանց արարքներն արդեն իսկ գերազանցել են 37 թվականի վերաբերյալ մեր վատագույն պատերացումներն անգամ: Չէ՞ որ պատահական մի Վահե գործիք դարձրեց նրանց եւ օգտագործեց ընդդեմ սյունեցիների, ընդդեմ իրենց երեկվա ընկերների, հարեւանների, բարեկամների, համաքաղաքացիների…

***

Մեզանից յուրաքանչյուրը հավանաբար նկատել է, որ ամեն օր՝ արշալույսից առաջ, աղջամուղջը խտանում է, եւ քիչ հետո խավարը սկսում է նահանջել՝ իր իշխանությունը զիջելով լույսին եւ լուսաբացին: Վերջին օրերի աղջամուղջն ադամամութին բնորոշ մթություն է, որը, անտարակույս, լուսաբաց է ավետում:

Այո, լուսաբացը մոտ է: Մենք միասին ու անպայման տեսնելու ենք Վահե Հակոբյանի շնչակտուր փախուստը Սյունիքից: Եվ նրա անունը հավերժորեն տեղ է գտնելու Սյունիքի պատմության աղբանոցում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Երկու տարում մարզում 13 հազար հեկտարով կրճատվել է աշնանացանի ծավալը

Սյունիքի մարզը եղել եւ մնում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական խոշոր մարզերից մեկը, ավելի ճիշտ՝ գյուղական տնտեսության եզակի ռեսուրսներով օժտված տարածաշրջան: Հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքի մեջ Սյունիքի տեսակարար կշիռը մոտ յոթ տոկոս է:

Ամեն տարվա այս օրերին, երբ հրապարակվում են նախորդ տարվա վերաբերյալ վիճակագրական տվյալներ, Սյունիքի գյուղաշխարհին հետաքրքրում է հատկապես հացահատիկային մշակաբույսերի աշնանացանի վիճակը, հետաքրքրում է, թե մարզի 43 600 հա վարելահողից որքա՞ն է դրվել աշնանացանի տակ. հիշեցնենք՝ հացահատիկային մշակաբույսերի աճեցման ու կայուն բերքատվության ապահովման գլխավոր գրավականն աշնանացանն է:

2011 թվականից մարզում աշնանացանի ծավալներն աճել են. 2015 թվականին, ըստ Սամվել Թանգյանի, կատարվել է մոտ 23.5 հազար հա աշնանացան. գարնանացանի հետ մեկտեղ դա կազմում էր վարելահողերի մոտ 80 տոկոսը:

2016-17թթ. աշնանացան-գարնանացանի ցուցանիշները կտրուկ իջել են. մարզում մշակվել է վարելահողերի 60 տոկոսը:

2016-ին աշնանացան է կատարվել 17309 հա-ի վրա:

2017-ին այդ ցուցանիշն ավելի է իջել՝ հասնելով 10183 հա-ի:

Եվ չնայած այդ նահանջին, 2017թ. հուլիսի 28-ին մարզպետը խաբել է Սիսիան այցելած

էջ 7

Խելահեղ օրերի մասնակիցն ու վկան

էջ 1

նրանց վստահությունը, հուսախաբ չանեինք նրանց: Հանձինս մեզ ժողովուրդը պիտի հուսալի պատվար ունենար, իսկ դա խելամիտ բազմաքայլ կոմբինացիա էր պահանջում: Տղաները գետնի տակից էլ զենք էին գտնում: Գորիսեցի մի տարեց կին այն օրերին մոտեցավ մեզ, թե՝ գիտի որտեղ են Գարեգին Նժդեհի զենքերը: Նա մեզ տարավ Շորին ձորի քարանձավներից մեկը, ասելով՝ Նժդեհն այստեղ է զենքերը թաքցրել՝ զգուշացնելով՝ հայ ազգի պատերազմը դեռ նոր է սկսվելու: 1914-15 թթ. արտադրության էին զենքերը: Նժդեհն ու նրա զինակիցները դրանք հատուկ նյութով էին պատել, որ շարքից դուրս չգան: Հետագայում Նժդեհի թաքցրած զենքերի նոր պահոցներ գտանք:

Մենք «գրադ» կայանք էլ ունեցանք: Այն առաջին անգամ օգտագործեցինք Կոռնիձորի կռիվների ժամանակ: Այդ ժամանակ Վազգեն Սարգսյանը մեզ հետ էր: Սեփական արտադրության թնդանոթ էլ ունեցանք: Երբ կրակում էինք՝ ուռռա էինք գոչում: Այդ օրը պիտի կրակեինք Լաչինի վրա: Եվ կրակեցինք: Երեկոյան ռուսական «Վրեմյա» լրատվական ծրագրից իմանում ենք, որ հայերը կրակել են Լաչինի հեռավոր գյուղերից մեկի վրա եւ մի տուն է ավերվել: Փաստորեն, դրա «հեղինակը» մենք էինք, ու մեր թնդանոթի արձակած արկն ընկել էր ոչ թե Լաչինի վրա, այլ ավելի հեռու էր գնացել: Այստեղ կարեւորն այն էր, որ այն նպատակային է օգտագործվել:

Պատահել է նաեւ այսպես. Խանածախի մոտ թուրքի գյուղ կար: Մեզ կենդանի թուրք էր պետք: Թնդանոթով կրակեցինք: Պարզվեց՝ թուրքի վրա չենք կրակել: Մենք պատահականությամբ կենդանի մնացինք: Փաստորեն մենք «սեփական դարպասին ենք գոլ խփել»:

Շուռնուխ գյուղը պաշտպանում էին Գորիսի Մերգելյանի անվան ինստիտուտի գիտաշխատողները: Ռուսների օգնությամբ ազերիները գերեվարեցին պաշտպաններից 21 հոգու, որոնցից երկուսն աղջիկ էին: Ինքնապաշտպանության խորհուրդը չէր կարող ձեռքերը ծալած նստել: Գործի անցանք: Գերեվարվածներին ազերիները տարել էին Կուբաթլիի ոստիկանատուն: Երբ մոտեցանք ոստիկանակատանը, մերոնք երգում էին՝ «Խեղճ մշեցին...»: Այսինքն՝ մերոնք չէին ընկճվել, նրանց ոգին բարձր էր:

Առհասարակ, հայ-ադրբեջանական հակամարտության ժամանակ Գորիսում եւ շրջանի գյուղերում ոչ մի կրթօջախ, հիմնարկ-ձեռնարկություն չէր դադարեցրել աշխատանքը. դա նաեւ ինքնապաշտպանության խորհրդի որոշումն էր: Շրջանը հրետակոծվում էր, սակայն ամենուր աշխատանք էր, զանգի ղողանջ: Իսկ միայն Գորիսի վրա թուրքերը 9 կետից էին կրակում: Գորիսեցիները քայլող հերոսներ էին:

Լուր տարածվեց, թե թուրքերը հարձակվել են Քարահունջի վրա: Ես այդ ժամանակ Կոռնիձորում էի: Երբ հասա քաղաք եւ ուզում էի գնալ Քարահունջ, անհնարին էր: Գորիսի քրեակատարողական հիմնարկու-

թյան շենքի կողքից այլեւս հնարավոր չէր առաջ գնալ: Գորիսը գնում էր պաշտպանելու Քարահունջը, որի ձեռքին զենք էր, որի ձեռքին՝ խորովածի շիշ, մյուսն էլ սովորական շիշ էր վերցրել կամ բահ: Ասես Ավարայր էին գնում գորիսեցիները՝ ով ինչպես կարող էր: Հետո պարզվեց, որ կովերն են հանդից գալիս. մութ էր, եւ թանձր մթության մեջ մարդիկ քայլող սեւ կետեր էին նշմարել: Իսկ քայլող այդ կետերը մարդիկ թուրքի տեղ էին դրել:

Մեզ ահազանգեցին՝ Բազարչայից ազերիները հովիվների են տարել: Գնացինք, Սիսիանից մեզ միացավ Մինասյան Աշոտը՝ իր տղերքով: Պարզվեց, որ թուրքերը կովեր են տարել եւ ոչ թե հովիվներին: Մի բան պիտի անեինք: Հարձակվեցինք մոտակայքում գտնվող ազերիների ֆերմայի վրա: 4000 գլուխ ոչխար բերեցինք, ձիեր, կովեր: Այդ օրը ես թալան տեսա առաջին անգամ: Ոչխարների մի մասը Սիսիանը տարավ, 1900 գլուխ էլ մենք բերեցինք: Դրանք վաճառեցինք ու զենք գնեցինք:

Այն օրերին հայ ժողովուրդն օր-օրի ավելի էր հերոսանում: Եվ դա էր մեր հաղթաթուղթը: Խոզնավարից զանգեցին, թե՝ ազերիները հարձակվել են, հասեք: Ազգը շտապեց օգնության: Ազգ եմ ասում, որովհետեւ երեւանից աշակերտներ եկան մեզ մոտ՝զենք տվեք, մենք պիտի կռվենք: Պատկերացնում եք՝ աշակերտները եկել են մեզ օգնության՝ գիտակցելով, որ հայրենիքը սկսվում է նաեւ Խոզնավարից: Բնականաբար, մենք նրանց մարտադաշտ չթողեցինք մտնել: Մկրտչյան Համլետը թե՝ կռվող տղերքին՝ առաջին գիծ, իսկ աշակերտներին տարեք շատ հեռու կանգնեցրեք, թող վառոդի հոտը զգան: Երբ աշակերտական նստարանը թողնում եւ աշակերտն է գալիս մարտադաշտ, այդ ազգին մահ չկա, ամբողջ ազգն է մահապարտ: Դրա համար մենք հաղթեցինք ու միշտ հաղթելու ենք: Վկան՝ 2016-ի ապրիլյան պատերազմը, երբ 18-20 տարեկան մեր զինվորները կանգնեցրին ազերիների հատուկ ջոկատայիների առաջխաղացումը: Իսկ օգնության հասած իրենց հայրերին ու պապերին նրանք ասացին՝ դուք մեզ միայն զինամթերք հասցրեք, մնացածի հետ գործ չունենք:

… Ես լսում եմ նրան եւ մտածում. Աստված իմ, այս ինչ խենթեր են ծառայում բանակում: Սա խելահեղություն է, մասսայական հերոսություն: Ազգի ոգին երբեք չի քնում, պայքարի ոգին միշտ արթուն է ազգիս մոտ: Երեւի դրա համար է Գարեգին Նժդեհն ասել՝ փոքր ազգերն ավելի հայրենասեր պետք է լինեն: Եվ Հայկի ու մնացած տղաների ցանածն է, որ այսօր հայոց բանակն ունի առյուծաձեւ Միերներ:

Հպարտ-հպարտ Հայկ Մանուչարյանը շարունակում է պատմելը: Սակայն քիչ անց նրա դեմքին տխրություն է երեւում: Լռում է, լռեց, լռեց... Հետո թե՝ մենք միայն մեկ անգամ պարտվեցինք, այն էլ Լալազարի կամրջի կռիվն էր, անօգնական, շիվար կանգնած էինք... Ի՜նչ տղաներ էին Կարենը, Մուշեղը, Քյամանչան... Առյուծ էին նրանք, որոնց դիմաց կանգնած էին հազարից ավել թուրքեր: Կռիվն անհավասար էր: Վիրավոր, արյունաքամ Կարենին թուրքերը տարան...

Ու ես հիշում եմ այդ օրերի Գորիսը: Գորիսն ասես կուչ էր եկել, մի բուռ դարձել: Դա՝ արտաքուստ: Մարդիկ հավաքվեցին, միախմբվեցին՝ ակն ընդ ական... Կարեն Բաղդասարյանն ապրում էր իմ տնից մի շենք ներքեւ: Գեղեցիկ աչք-ունքով, խանդավառ, մարդասեր ու մարդամոտ մի մարդ էր նա: Երկու չքնաղ երեխա ուներ, մի աղջիկ ու մի տղա: Հիմա նրա Անդրանիկ տղան զինվորական է, ավարտել է Երեւանի Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը: Նա պաշտպանում է հայոց սահմաննե-

րը: Եվ վայ այն ազգին, ով կփորձի խախտել հայոց սահմանը: Անդրանիկը վրեժ ունի...

- Առանց ժողովրդի աջակցության մենք ոչինչ էինք,- ասում է Հայկ Մանուչարյանը,- ժողովուրդը ոտքի կանգնեց եւ պաշտպանեց իր հողը, իսկ այդ օրերին ոստիկանությունը մեր կողքին էր, նա սատարեց պայքարին՝ հաճախ վտանգելով իր կյանքը: Այն օրերին ամեն մի հայ իր կենսագրությունում փառավոր էջեր գրեց: Եվ դա ոչ միայն կռվող տղերքը, այլեւ թիկունքի մարդիկ. նրանց կողմից հարազատ ոստանը չլքելն ուժ էր տալիս կռվողներին, նրանք իրենց մնալով ամուր պահեցին կռվող տղերքի թիկունքը: Եթե թիկունքումդ շունչ ես զգում, ուրեմն, գիտես, թե ինչի համար ես պայքարում եւ զոհվում: Զոհվեց նաեւ Անդրանիկ Մարտիրոսյանը: Նա ցերեկը զենք էր պատրաստում, իսկ գիշերը պոստում էր: Թոխունց Վլադիկին ինչպես մոռանանք, անձնուրաց այդ մարդը վերջերս մահացավ, ո՞վ հիշեց նրա արածը, ոչ ոք: Ասելս այն է, որ կռված տղաներին պետք է գնահատել, նրանց կերպարը հանրությանը ներկայացնել, որ այսօրվա, վաղվա սերունդն իմանա, ոգեշնչվի: Բայց....

Այդ բայցը շատ բան ունի իր մեջ պահած, ուրեմն մենք՝ բոլորս, դեռ անելիք ունենք, մեր խոսքը պիտի ասենք այդ տղաների մասին:

30 տարվա խելահեղ ու հերոսական օրերի ակտիվ մասնակից-զրուցակիցս, որքան էլ զարմանալի է, բայց փաստ՝ երբեք չփոխեց «Երկրապահի զորամիավորումներ» վերտառությամբ իր տոմսը՝ Վազգեն Սարգսյանի ստորագրությամբ: Ախր Վազգենի տվածն է, Վազգենի ստորագրությունն է, ստորագրություն, որ Հայկ Մանուչարյանի համար սուրբ է, որը նրա համար պայքարի, հաղթանակների խորհրդանիշ է:

Հայկ Մանուչարյանը նաեւ խաղաղ օրերում է իր կենսագրությունում գեղեցիկ էջեր գրել ու գրում: Դասախոս-մանկավարժ- մտավորականի կերպարը նրա ուսանողների համար ոգեշնչման աղբյուր է: Նա դասավանդում է Գորիսի պետական համալսարանում: Եվ հաճախ մաթեմատիկայի ժամերն ուսանողներն օգտագործում են անցած-գնացած օրերի իրական պատմությունն իմանալու համար, գիտեն, որ սիրելի դասախոսը միայն ճշմարտությունն է ասելու:

Հայկ Մանուչարյանը գիտական 9 հոդվածի հեղինակ է, քանիցս հաղթող է ճանաչվել մասնագիտական մրցույթներում:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Հանրային քննարկում Կապանի համայնքապետարանում

«Արարատցեմենտ» փակ բաժնետիրական ընկերությունը նախատեսում է Կապանում՝ Գործարանային 16/8 հասցեում, կառուցել ցեմենտի աղացման արտադրամաս՝ տարեկան 186 հազար տոննա արտադրողականությամբ (ժամում 25 տոննա): Այդ առիթով Կապանի համայնքապետարանում տեղի ունեցավ արտադրամասի հնարավոր շահագործման դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում՝ ըստ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի եւ կառավարության համապատասխան որոշման: Քննարկմանը մասնակցում էին բնապահպաններ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, լրագրողներ, շահագրգիռ այլ անձինք: Քննարկումն վարում էր Կապանի քաղաքապետի տեղակալ Արգամ Գրիգորյանը:

«Արարատցեմենտ» ՓԲ ընկերության տեխնիկական տնօրեն Սամվել Թադեւոսյանը, ներկայացնելով աշխատանքային նախագիծը, մասնավորապես նշեց, որ այստեղ ներկրվելու են կլինկեր (ցեմենտի կիսաֆաբրիկատ), շլաք եւ գիպս, որոնք անցնելով գնդավոր աղացով եւ մանրացվելով՝ ստացվում է վերջնական արտադրանք՝ «Պորտլենդ» տիպի ցեմենտ: Նախատեսվող տարեկան 186 հազար տոննա ցեմենտի արտադրությունը կախված կլինի իրացման աստիճանից: Բնապահպանության գծով տեխնիկական տնօրենի տեղակալ Հովհաննես Դեմիրճյանը տեղեկացրեց, որ գնդաղացը հագեցած է ժամանակակից փոշեորսիչ սարքավորումներով, մաքրումը կատարվում է եռաստիճան համակարգով, ընդ որում՝ փոշեգազային խառնուրդը երրորդ փուլում անցնում է թեւքավոր գլխավոր ֆիլտրով: Վերջինս ժամանակակից արտադրության սարքավորում է, որի օգտակար գործողության գործակիցը 99, 98 տոկոս է: **«Եթե այն աշխատի առավելագույն հզորությամբ, կարելի ասել, որ կբացառվի որեւէ արտանետում արտաքին միջավայր»,** - հավաստիացրեց բանախոսը՝ ներկայացնելով «Արարատցեմենտ» ընկերության N2 արտադրամասի տեխնոլոգիական սխեման: Բացի այդ նշվեց, որ տեխնոլոգիական սխեման 21 օղակ է, մի օղակում արտադրական վթար լինելու դեպքում ցեմենտի արտադրության հոսքագիծն ավտոմատորեն կանգ է առնում: Բանախոսը նաեւ շտապեց հանգստացնել հարցադրողներին, որ արտադրական տեխնոլոգիայում բացառվում է պայթյունը, քանզի արտադրական գործընթացում պայթյունավտանգ նյութեր (գազ եւ այլն) չեն օգտագործվում, հումքն ընդամենը աղացվում է:

էջ 8

- Արտադրամասի գործունեությունը շրջակա միջավայրի վրա կունենա որոշակի ազդեցություն, - այս կարծիքն ունեին քննարկման մասնակիցները եւ այդ համատեքստում իրենց հարցերն ուղղեցին ընկերության ներկայացուցիչներին, մասնավորապես մտահոգություն հայտնելով, որ Կապանում առկա երկու պոչամբարներին ավելանում է բնապահպանության ռիսկ պարունակող մի արտադրություն:

Դժբախտ պատահար Կապանի լեռնահարստացման կոմբինատում

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերության աշխատակցի մահվան դեպքի առթիվ:

2018թ. մարտի 3-ին՝ ժամը 04.10-ին, «Կապան ԲԿ» ՓԲ ընկերությունից ահազանգ է ստացվել առ այն, որ «սուր էկզոգեն թունավորում» ախտորոշմամբ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերությունից իրենց մոտ են տեղափոխվել Կապան քաղաքի բնակիչներ Պողոս Ալեքսանյանը՝ ծնված 1964թ., Կարո Կարապետյանը՝ ծնված 1970թ. եւ Արթուր Մարտիրոսյանը՝ ծնված 1994թ., ով հիվանդանոցում մահացել է:

Պարզվել է, որ նշված երեք անձինք աշխատում են «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերությունում. Արթուր Մարտիրոսյանն աշխատում էր որպես ապարաբարձիչ մեքենայի վարորդ, Պողոս Ալեքսանյանը՝ բեռնատարի վարորդ, իսկ Կարո Կարապետյանը՝ լեռնային վարպետ: Վերջիններս «Կապան ԲԿ» ՓԲ ընկերություն են տեղափոխվել կոմբինատի Շահումյանի անվան ստորգետնյա հանքի 630 հորիզոնի թիվ 20 արեւմտյան երակային շտրեկից:

ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ լեռնահանքային աշխատանքների կատարման ընթացքում անվտանգության կանոնների խախտման հետեւանքով Արթուր Մարտիրոսյանի մահվան դեպքի առթիվ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասով:

Կատարվում են անհրաժեշտ քննչական եւ դատավարական այլ գործողություններ՝ թունավորման պատճառները պարզելու ուղղությամբ. կատարվել է դեպքի վայրի զննություն, հագուստների առգրավումներ, նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ, վերցվել արյան նմուշներ, դեպքի վայրից՝ արգասիքի նմուշներ, հարցաքննվել վկաներ:

ՀՀ քննչական կոմիտեի ֆեյսբուքյան էջից

Երկու տարում մարզում 13 հազար հեկտարով կրճատվել է աշնանացանի ծավալը

էջ 5

վարչապետին՝ զեկուցելով, թե Սյունիքում մշակվում է վարելահողերի 85 տոկոսը: Ու քանի որ վարչապետն էլ ուզում էր, որ իրեն խաբեն ու բարձր, չեղած թվերով կերակրեն հայ հանրությանը, իբրեւ ճշմարտություն ընդունեց մարզպետի հերթական սուտը եւ նույնիսկ բարձր գնահատեց Սյունիքի մարզպետի գործունեությունը գյուղատնտեսության ոլորտում՝ հայտարարելով, որ շատ շուտով Սյունիքն Իսրայել է դառնալու:

Իրականում, սակայն, արտառոց բան է տեղի ունեցել Սյունիքի գյուղական տնտեսության մեջ՝ երկու տարում (Վահե Հակոբյանի պաշտոնավարման ընթացքում) մոտ 13 հազար հեկտարով պակասել է հացահատիկային մշակաբույսերի աշնանացանը:

Գրեթե սենսացիոն այդ իրողությունը վաղ թե ուշ, համոզված ենք, քննարկման առարկա կդառնա պետական մակարդակով: Չէ՞ որ Արցախյան պատերազմի տարիներին անգամ, երբ մարզի մի հատվածը ռազմական գործողությունների թատերաբեմ էր, աշնանացանի տապալման նման օրինակ չենք ունեցել:

Թե ինչու է աշնանացանը Սյունիքում 2017-ին ձախողվել, դա առանձին ուսումնասիրության հարց է, եւ, ինչպես նշեցինք, երբեւէ կդառնա քննարկման առարկա:

Բայց մտահոգիչ մի փաստ՝ խնդրո առարկային առնչվող, արդեն իսկ ունենք:

Տաթեւ համայնքում, մարզպետ Վահե Հակոբյանի հանձնարարությամբ եւ համայնքապետի ու նրա դիմակավորված օգնականների ջանքերով, կեղծվել է պետֆոնդի վարելահողերը վարձակալությամբ տալու համար 2017-ին անցկացված մրցույթը: Դա խոստովանում է ինքը՝ համայնքապետ Մուրադ Սիմոնյանը:

Համայնքի ղեկավարի առջեւ մրցույթից առաջ խնդիր էր դրվել մի քանի անցանկալի անձանց զրկել հողեր մշակելու հնարարավորությունից, ինչը եւ կյանքի կոչվեց:

Ընդ որում՝ հողերի մշակման հնարավորությունից զրկվեցին այն ֆերմերները, ովքեր մոտ 3-4 անգամ ավելի գումար էին առաջարկում մեկ հեկտարի վարձակալության համար, քան Մուրադի բարեկամներն ու մերձավորները:

Եվ միայն այդ «մրցույթի» արդյունքում համայնքային բյուջեն զրկվեց տարեկան մոտ հինգ մլն դրամ գումարից:

Դա էլ ոչինչ, մանավանդ որ այդ ֆերմերներն ազատագրված տարածքներում ձեռնամուխ են եղել ավելի շատ հող մշակելու գործին: Արտառոցն այն է, որ վարելահողերի մոտ 60 տոկոսն անմշակ դարձած Սյունիքում մարզպետը խոչընդոտում է ֆերմերներին, ովքեր ուզում են հող մշակել:

Այդ ամենին զուգահեռ խմբագրությանը հայտնի է դարձել, որ Տաթեւ համայնքի ղեկավարը, Տաթեւի գյուղապետ աշխատելու վերջին շրջանում, ակնհայտ սխալներով է անցկացրել համայնքային ինչ-որ գույքի աճուրդ կամ վարձակալության մրցույթ, ինչի առիթով ժամանակին քրեական գործ է հարուցվել:

Խմբագրությանը հայտնի է դարձել նաեւ, որ պետֆոնդի հողերի 2017թ. «մրցույթը» մարզպետի սրտով կազմակերպելուց անմիջապես հետո կարճվել է Մուրադ Սիմոնյանի աճուրդային (մրցութային) խաղերի հետ կապված քրեական գործի նախաքննությունը:

Հիմա պարզագույն մի հարց է հետաքրքրում մարդկանց՝ հայտնի քրեական գործի կարճումը որքա՞ն է առնչվում Մուրադ Սիմոնյանի կողմից հողերի 2017թ. մրցույթի արդյունքներն աղավաղելու հետ: Արդյո՞ք դրանով մարզպետն իր երախտագիտությունն է հայտնել Մուրադին: Չէ՞ որ մարզպետն է տեղի-անտեղի հայտարարում, որ ինքն է Սյունիքում քրեական գործեր հարուցում, քրեական գործեր կարճում, նախաքննության ժամկետներ երկարաձգում…

Տեղեկացնենք նաեւ, որ աշնանացանի վիճակը մեզ հետաքրքրել է դեռեւս 2017-ի նոյեմբեր-դեկտեմբերին:

Թվերը չենք կարողացել վերցնել ո՛չ մարզպետարանից, ո՛չ էլ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Սյունիքի մարզային գործակալությունից:

Խորհուրդ են տվել սպասել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական հաղորդագրությանը: Եվ ահա մի քանի օր առաջ հանրությանն է ներկայացվել այդ տեղեկանքը: Ու ի՞նչ է պարզվել:

Պետական վիճակագրական ծառայության տեղեկությունները միեւնույն հարցի վերաբերյալ հակասական են: Եվ չի բացառվում նույնիսկ, որ մեր իսկ կողմից ներկայացված թվերն էլ իրականության ստույգ արտացոլանքը չեն:

Հացահատիկ եւ հատիկաընդեղեն 2017-ին մշակվել է 16674 հա-ի վրա, 2016-ին՝ 26341 հա-ի վրա (դրա մեջ մտնում է ե՛ւ աշնանացանը, ե՛ւ գարնանացանը):

2017-ին մարզում կատարվել է 10 183 հա աշնանացան:

Մեկ այլ տեղեկության համաձայն՝ 2016-ին կատարվել է 17309 հա աշնանացան:

Մեկ ուրիշ տեղեկությամբ՝ 2017-ի աշնանացանը կազմում է 2016-ի աշնանացանի 91,7 տոկոսը, որը պետք է լինի 11105 հա:

Մեկ այլ տեղեկությամբ՝ 2017-ին Սյունիքում կատարվել է, ինչպես նշեցինք, 10183 հա աշնանացան, որը 2016-ի ցուցանիշի ոչ թե 91.7 տոկոսն է (ինչպես պաշտոնապես հայտարարվում է), այլ 58.83 տոկոսը:

Կարդում ենք, նորից կարդում, նորից հաշվում ու այդպես էլ չենք կարողանում ստույգ իմանալ, թե որքա՞ն աշնանացան է կատարվել Սյունիքում 2016 եւ 2017 թվականներին: Իսկապես, 2016-ին մարզում 11102 հա աշնանացա՞ն եք կատարել, թե՞ 17309 հեկտար:

Նաեւ չենք կարողանում հասկանալ՝ ինչո՞ւ է ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն աղավաղում պարզագույն այդ թվերը:

Սյունիքի գյուղատնտեսության մեջ 2017-ին նահանջ է արձանագրվել նաեւ հացահատիկի եւ հատիկաընդեղենի արտադրության ոլորտում: Տարվա ընթացքում արտադրվել է մոտ 307 հազար ցենտներ հացահատիկ եւ հատիկաընդեղեն. 2016-ին այդ ցուցանիշը եղել է մոտ 745 հազար ցենտներ: Գրեթե նույն վիճակն է արձանագրվել կարտոֆիլի եւ բանջարեղենի արտադրության ոլորտում:

Ի՞նչ անել:

Վիճակագրությունը ճշտել եւ ճշմարտամոտ դարձնել՝ ոչ ոք չի կարող Հայաստանում:

Իսկ անմշակ ու խոպան վարելահողերը…

Գարնանացանի հաշվին միգուցե եւ մի փոքր շտկենք վիճակը, եթե գյուղացուն չխանգարեն մարզպետն ու համայնքապետերը:

Գարնանացանի լավագույն արդյունքների դեպքում անգամ, ըստ գյուղմասնագետների, մարզում անմշակ կթողնենք վարելահողերի մոտ 50 տոկոսը: Այնպես որ՝ Սյունիքի առջեւ ծառացած հիմնախնդիրներից մեկը վարելահողերի մշակման խնդիրն է: Քանի դեռ այդ հարցը չենք լուծել՝ խոսք չի կարող լինել մարզի գյուղատնտեսության զարգացման եւ առհասարակ գյուղապահպանության մասին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Գորիսի պետական համալսարանի տարեկան գործունեության հաշվետվությունը

էջ 2

շարունակում է քայլեր իրականացրել՝ դիմագրավելու ներկա ժամանակաշրջանում բուհի համար ոչ շահեկան մի շարք գործոնների ազդեցությանը, որոնց թվում են՝ ուսանողների թվաքանակի ու ֆինանսական ռեսուրսների նվազումը, աշխատակազմի թույլ մոտիվացիան՝ պայմանավորված սոցիալական իրադրությամբ, երիտասարդ մասնագետների գիտական գործունեության ոչ գրավիչ դիրքը եւ այլն: Հրատապ է մնում այն, որ դասախոսական կազմի քիչ թվով մասն է ակտիվորեն ներգրավված հետազոտական գործընթացներում, ամբիոնային ուղղվածության ընդհանուր գիտահետազոտական աշխատանքների թիվը մեծ չէ,- նշեց ռեկտորը: - **Անհրաժեշտ է հստակ սահմանել ու համակարգել բուհի հետազոտական գերակայություններն ու հիմնական ուղղությունները, հետաքրքրությունների ու հավակնությունները, իրականացնել գիտահետազոտական գործունեությունը կանոնակարգող ու խթանող քաղաքականություն»:** Բուհում գործում է ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինասավորվող մեկ գիտական ծրագիր՝ «Սյունիքի նյութական եւ հոգեւոր ժառանգությունը», որը նկատելի ձեռքբերումներ է արձանագրում: Հրատապ է մնում բնագիտական ուղղվածությամբ գիտական թեմաների ֆինանսավորումը: Ռեկտորը ռազմավարական կարեւոր խնդիր համարեց նաեւ գիտահետազոտական ոլորտի համար ֆինանսական պլանավորման իրականացումը եւ բավարար միջոցների հատկացումը՝ գիտական աշխատանք կատարելու համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

Բուհում ստեղծվել է ռազմավարության հարցերով զբաղվող հանձնաժողով՝ ռազմավարության ամբողջ առաջընթացը մշտադիտարկելու, խոչընդոտների մասին տեղեկացնելու, դրանց հաղթահարման ուղիները բացահայտելու, խնդիրների վերանայման առաջարկություններ կատարելու համար:

Ռեկտորը խոսեց նաեւ ներկայում մարզային բուհերի համար ոչ բարենպաստ պայմաններում ԳՊՀ-ի ֆինանսական բարելավման ուղիների մասին. անհրաժեշտ է ընդլայնել համալսարանի վճարովի ծառայությունների ձեւերը բյուջեի եկամտային մասում, որոնել աշխատավարձի ֆոնդին ուղղվող լրացուցիչ աղբյուրներ, մեծացնել բյուջետային գիտական ֆինանսավորման ծավալները, օգտագործել միջազգային ֆինանսավորվող ծրագրերի հնարավորությունները, կենտրոնացնել համալսարանի բոլոր հնարավորություններն ուսուցման բոլոր ձեւերով 2017-2018 ուս.տարվա ընդունելության պլանի կատարումն ապահովելու համար, զարգացնել պայմանագրային հարաբերություններ պատվիրատու կազմակերպությունների հետ կադրերի պատրաստման գործում, իրականացնել ռեսուրսախնայողության ռեժիմ եւ այլն:

Ռեկտորի հաշվետու զեկույցից հետո ծավալվեց բուռն քննարկում: Մասնավորապես բուհում ընթացող հավատարմագրման գործընթացի շուրջ ռեկտորին հարցեր ուղղվեցին ինչպես ԿԳ նախարարի, խորհրդի նախագահի ու խորհրդի անդամների, այնպես էլ խորհրդակցական ձայնի իրավունքով նիստին ներկայացած անձանց կողմից: Եղան առանձին ելույթներ ու առաջարկներ: Ելույթ ունեցավ նաեւ ԿԳ նախարար Լեւոն Մկտչյանը՝ բավականին հանգամանալից անդրադառնալով «Բարձրագույն կրթության մասին» օրենքի նախագծի հիմնադրույթներին, բարձրագույն կրթական դաշտում սպասվող արմատական վերափոխումներին, որոնց պետք է լրջորեն նախապատրաստվել՝ սահմանելով բուհի առաջիկա տարիների գերակայությունները, զարգացնելով ներուժը: Համալսարանում ընթացող ինստիտուցիոնալ հավատարմագրման ներկա գործընթացը, նախարարի խոսքով, պետք է առավել շատ խրախուսման եւ ավելի շատ ջանքերի գործադրման հանգեցնի՝ խթանելով բուհի զարգացումն այս դժվարին ժամանակահատվածում: Խոսելով 2016 թվականից մինչեւ օրս բուհում ընթացող դինամիկ բարեփոխումների մասին՝ Լ.Մկրտչյանը կարեւորեց, որ այդ նախաձեռնությունները հաջողությամբ եւ արդյունավետ իրականացնելու համար ԳՊՀ- ում վերանայվել, հաստատվել եւ կիրառվում են մի շարք նոր փաստաթղթեր՝ միտված բուհի կառավարման համակարգի, ինչպես նաեւ ուսումնագիտական գործընթացի բարելավմանն ու որակի մշակույթի ձեւավորմանը: Նախարարը խոսեց նաեւ տարածաշրջանային կրթական խնդիրների մասին, աշխատաշուկայում պահանջված մասնագիտությունների ներդրման, դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներն ակտիվացնելու, բուհ-դպրոց կապն ամրապնդելու, բուհի գիտահետազոտական ներուժը զարգացնելու եւ այլ կարեւոր հարցերի մասին: Նա առաջարկեց խորհրդի անդամներին կոնկրետ մոտիվացիոն քայլեր ձեռնարկել՝ համապատասխան մասնագիտությունների պահանջարկի բարձրացման ուղղությամբ:

ԳՊՀ-ի խորհրդի նախագահ Վահե Հակոբյանը, անդրադառնալով իրեն հետաքրքրող հարցերին, կարեւորեց բուհի կազմակերպահիրավական կարգավիճակի ակնկալվող փոփոխությունը, ինչը, նրա կարծիքով, «կստեղծի համալսարանի զարգացման նոր ծրագրեր մշակելու եւ քննարկելու հնարավորություններ»: Նա «ձեռնպահ» դիրքորոշում արտահայտեց համալսարանի 2016-2017 ուսումնական տարվա աշխատանքային գործունեության հաշվետվության, ինչպես նաեւ 2018թ. նախահաշվի հաստատման՝ կանոնակարգով սահմանված բաց քվեարկությանը:

Պետք է նշել, որ ԳՊՀ-ի գործունեության տարեկան հաշվետվության շուրջ հնչած որոշ հարցադրումներ տարերային ու խիստ հակասական բնույթ էին կրում, չէին առնչվում համալսարանի համար առաջնային նշանակություն ունեցող խնդիրներին եւ ավելի շատ ի ցույց դրեցին հարցադրողների անիրազեկվածությունը համալսարանական գործընթացներից, բուհում վերջին տարիներին իրականացված զգալի բարեփոխումներից:

ԳՊՀ-ի 2016-2017 ուստարվա գործունեության հաշվետվությունը եւ 2018թ. եկամուտների ու ծախսերի նախահաշվի նախագիծը բաց քվեարկությամբ հավանության արժանացան ու հաստատվեցին խորհրդի կողմից (երկու դեպքում էլ՝ կողմ-17, դեմ-0, ձեռնպահ - 1):

ԳՊՀ-ի խորհուրդը բաց քվեարկությամբ ընդունեց նաեւ օրակարգի ընթացիկ հարցը՝ այսպես ասած, վերահաստատել բուհի կարգավիճակի փոփոխության մասին խորհրդի՝ 24.02.2017թ. ընդունած թիվ 3 որոշումը եւ կրկին միջնորդություն ներկայացնել ԿԳ նախարարություն:

Եզրափակելով նիստը՝ Վահե Հակոբյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին եւ կոչ արեց բնականոն աշխատել: Նա հավելեց, որ խորհրդի կազմում առաջիկայում փոփոխություններ կլինեն՝ պայմանավորված մի քանի անձանց պաշտոնների փոփոխությամբ: Նշենք, որ Խորհրդի անդամի լիազորությունները՝ լիազոր մարմնի ներկայացմամբ դադարեցվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից: Խորհրդի կազմում թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է ՀՀ կառավարության ընդունած «Բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձեւավորման» կարգի համապատասխան կետերի պահանջներով:

Թ.ՄԱՐՈՒԹՅԱՆ
ԳՊՀ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Էռնան եւս միացավ մատնիչ կանանց փաղանգին. ճանաչէք եւ զգուշացէք

Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը շարունակում է ընդդեմ «Սյունյաց երկրի» գործող տվող կանանց զորահավաքը:

Փետրվարի 12-ին ոստիկանության Մեղրու բաժնից մեզ տեղեկացրել են, որ Ագարակ քաղաքի միջնակարգ դպրոցի տնօրեն Էռնա Բարխուդարյանը միացել է մատնիչ կանանց սյունիքյան զորագնդին եւ ստորագրել նախկին մատնիչների գրած հաղորդումները բառացիորեն կրկնող մի թղթի տակ: Սակայն գրել է ոչ թե թերթի հաշվապահի, այլ Սամվել Ալեքսանյանի անունը՝ իբր զանգահարել եւ սպառնացել է…

Մենք անմիջապես ճշտեցինք Էռնայի գրածի հիմնավորվածությունը կամ հավաստիությունը: Եվ պարզվեց, որ Սամվել Ալեքսանյանը վերջին 62 տարում (հաշվարկը նրա ծննդյան օրվանից է) մեկ անգամ գոնե չի զանգահարել Էռնա Բարխուդարյանին: Ափսոս…

Եվ, այդ բոլորով հանդերձ, ի տարբերություն մյուս մատնիչների, մենք քրիստոնեաբար ներում ենք նրան եւ չենք զայրանում: Բարձրյալն արդեն իսկ դաժանորեն պատժել է նրան, եւ նոր պատիժ չենք ցանկանում:

Նույնիսկ պատրաստ ենք առերեսվելու ժամանակ հաստատել այն, ինչ ինքն ասել է արդեն. ոչինչ (կրկնում ենք), որ վերջին վեց տասնամյակում գոնե մեկ անգամ նրան չենք զանգահարել: Այլապես նրան կհեռացնեն դպրոցի տնօրենի պաշտոնից ու ոչ ոք, բնականաբար, նրան աշխատանքի չի վերցնի: Եվ ոչ թե մատնությունը փնթիությամբ իրագործելու, այլ Վահե ոստիկանի ձեռքով մանրագործվող օպերացիան առավել ծիծաղելի դարձնելու համար:

Ասենք նաեւ՝ էռնային մեկ անգամ ենք հանդիպել՝ տարիներ առաջ: Ստեղծված իրավիճակում մի հարց է միայն հետաքրքրում՝ բա կարելի՞ էր օգտագործել այդ աղջկա վիճակը եւ այդկերպ վարվել նրա հետ: Մի ուրիշին գտնեիք, ուրիշին չէիք գտնում՝ նորից դիմեիք Լուսինեին, Արթուրին, Սիրուշին…

Իսկապես, չէր կարելի էռնային այդպես դաժանորեն եւ հրապարակավ պախարակել, թողնեիք աղջիկը վայելեր քրիստոնյաներիս խղճահարությունն ու գութը…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մեկ մատնիչի շուկայական գինը Կապանում

(ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին. հաղորդում հանցագործության մասին)

Սյունիքի մարզի Սյունիք գյուղի միջնակարգ դպրոցի շուրջ տեղի ունեցող իրադարձություններում նորանոր բացահայտումներ են ջրի երես դուրս գալիս:

Ինչպես արդեն ասվել է՝ Սյունիքի մարզպետի 2018թ. հունվարի 9-ի կարգադրությամբ այդ դպրոցում մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է համակարգի գնահատում եւ ֆինանսական աուդիտ:

Գնահատումն ու ֆինանսական աուդիտն ընդգրկում էին «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2016թ. հունվարի 1-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի գործունեությունը:

Ըստ մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2018թ. հունվարի 19-ի եզրակացության՝ աշխատավարձի հաշվարկման եւ վճարման գործառույթների ուսումնասիրման ընթացքում արձանագրվել է, որ 2016 եւ 2017 թվականներին, հակառակ տարիֆիկացիայի, հաշվապահին վճարվել է 100 հազար դրամ ամսական աշխատավարձ (տարիֆիկացիայով նախատեսված էր 0.5 դրույք հաստիք՝ 50 հազար դրամ աշխատավարձով):

Այդ ամենի արդյունքում փորձ է արվում պատասխանատվության ամբողջ բեռը բարդել դպրոցի տնօրեն Լիլիթ Առաքելյանի վրա, ինչի համար էլ ուսումնասիրության արդյունքներն ուղարկվել է ոստիկանության Կապանի բաժին:

Առաջին հայացքից թվում է, թե ամեն ինչ ճիշտ է, օրենքով է, տրամաբանական է, բայց…

Լիլիթ Առաքելյանը, ինչպես քանիցս է ասվել, թիրախավորվել էր «Սյունյաց երկիր» թերթ բաժանորդագրվելու, այդ թերթում հոդվածներ հեղինակելու, խմբագրին հեռածայնելու համար:

Վերջին օրերին, սակայն, նորանոր հանգամանքներ են բացահայտվում՝ կապված Սյունիքի դպրոցում իրականացված ստուգման արդյունքների հետ:

Պարզվում է՝ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը թաքցրել է ստուգման իրական արդյունքները եւ այն դարձրել առեւտրի առարկա այդ դպրոցի նախորդ տնօրեն Արթուր Մնացականյանի հետ:

Լիլիթ Առաքելյանից առաջ դպրոցը ղեկավարել է Արթուր Մնացականյանը, ասել է թե՝ ստուգումն ընդգրկել է նախեւառաջ Արթուր Մնացականյանի ղեկավարման շրջանը՝ 2016թ. հունվարի 1-ից մինչեւ այդ տարվա հուլիս:

Այնպես որ՝ հայտնաբերված հավելագրումն ընդգրկում է նախեւառաջ Արթուր Մնացականյանի ղեկավարման շրջանը:

Ստուգման արդյունքների քննարկումներում, մինչդեռ, բացակայում է Արթուր Մնացականյանի անունը:

Ինչո՞ւ է Վահե Հակոբյանը պարտակում Սյունիքի դպրոցի նախկին տնօրեն Արթուր Մնացականյանի (ով ներկայումս Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրենն է) օրերում սկիզբ դրված հավելագրումները:

Պարզվում է՝ մարզպետը պետության հաշվին առեւտրի մեջ է Արթուր Մնացականյանի հետ:

Նրան առաջարկվել է սուտ մատնություն ընդդեմ «Սյունյաց երկիր» թերթի, ինչի դիմաց խոստացել է թաքցնել բացահայտված հավելագրումը եւ հանդուրժել պաշտոնավարումը Կապանի թիվ 3 միջնակարգում:

Այսպիսով՝ ըստ մարզպետարանի ստուգման արդյունքներն արձանագրող հաշվետվության (19.01.2018թ.)՝ Արթուր Մնացականյանի ղեկավարած դպրոցում բացահայտվել են հավելագրումներ, որին գնահատական չի տրվել Սյունիքի մարզպետի կողմից:

Հարցն ունի մեկ այլ եւ շատ ուշագրավ կողմ նույնպես:

Սյունիքի միջնակարգ դպրոցը, ինչպես եւ մյուս դպրոցները, եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ են ներկայացնում մարզպետարանի ֆինանսական վարչության պետ Սուսաննա Դավթյանին: Բայց վերջինս տարիներ շարունակ «չի նկատել», որ փոքրիկ այդ դպրոցում տարեկան առնվազն 600 հազար դրամ գերածախս կա աշխատավարձի ուղղությամբ:

Իսկապե՞ս Սուսաննա Դավթյանը, ով ի պաշտոնե հանգամանալից զննում է յուրաքանչյուր դպրոցի ֆինանսական հաշվետվությունը, չի նկատել ո՛չ հավելագրումը, ո՛չ աշխատավարձի ֆոնդի գերածախսը:

Եթե չի նկատել՝ ուրեմն չի տիրապետում իր պարտականություններին: Իսկ եթե նկատել ու աչք է փակել, ապա ինչո՞ւ:

Արթուր Մնացականյանի եւ Սուսաննա Դավթյանի արարքն ակամա նոր հարցերի տեղիք է տալիս:

Նախ՝ արդյո՞ք Արթուր Մնացականյանը նախկինում եւս նման հավելագրումներ է կատարել իրեն վստահված Սյունիքի միջնակարգում:

Այնուհետեւ՝ արդյո՞ք նման «մանրուքներից» զերծ են Սյունիքի մարզի հանրակրթական մյուս դպրոցները եւս, չէ՞ որ նրանց ֆինանսական գործունեության վերահսկողությունը նույնպես դրված է Սուսաննա Դավթյանի վրա:

Հույս ունենք, որ պատկան մարմինները կպատասխանեն հանրությանը հետաքրքրող այդ հարցերին՝ դրանց տալով օրենքով սահմանված գնահատական:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հանրային քննարկում Կապանի համայնքապետարանում

էջ 6

Կապանի ավագանու անդամ Մանաս Կարապետյանն ընկերության ներկայացուցիչների ուշադրությունը սեւեռեց այն հանգամանքի վրա, որ արտադրամասը կառուցվում է կաթնամթերքի արտադրության «Մարիլա» ընկերությանը մերձ եւ Կապանի օդանավակայանի դիմաց: Այս վերջինի առնչությամբ պատասխանվեց, որ ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության գլխավոր վարչությունը չի առարկել Կապան քաղաքի Գործարանային փողոցի 16/8 եւ 16/9 հասցեներում գտնվող արտադրական հողամասերի վրա արտադրական օբյեկտների կառուցմանը: Ելույթ ունեցողը պնդեց իր կարծիքը՝ հնարավոր չէ՞ արտադրամասը մի այլ տեղ կառուցել, մանավանդ որ արտադրական գոտի կարելի է գտնել:

«Կլինկերը, գիպսը եւ հիդրավլիկ հավելանյութերը ներկրվում են արտադրամասի տարածք եւ պահեստավորվում բաց պահեստում», - այսպես էր գրված հանրային քննարկման վերաբերյալ տեղեկատվական փաթեթի «Համառոտ բնութագիր» բաժնում: Սա եւս հարուցեց քննարկման մասնակիցների մտահոգությունը: Ըստ նրանց՝ այդ նյութերը փոշու տեսքով քամին կարող է տարածել շրջակայքում:

Խնդրո առարկայի առնչությամբ իրենց մտահոգությունները, տեսակետներն ու կարծիքները հայտնեցին Արթուր Պատվականյանը, Դավիթ Հակոբյանը, Աշոտ Ավագյանը, Արմեն Փարսադանյանը, Արմեն Ղազարյանը եւ ուրիշներ:

Վերջում տեղեկացվեց, որ նոր կառուցվելիք արտադրամասը 64 հոգու կապահովի աշխատանքով, ընդ որում՝ աշխատատեղերից 32-ը՝ ինժեներատեխնիկական անձնակազմի, 32-ը՝ բանվորական համակազմի համար է:

Բացի այս նախնական քննարկումից նախատեսվում է անցկացնել եւս երեքը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայական՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ՕԱՍՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1210, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 06.03.2018թ.: